

93

= 93 =

Ո. ՌՈԶԵՆՖԵԼԴ

# Պ Ր Ո Յ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պ Ր Ա Կ IV.



ԱՐՇԵՍԱԿՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ  
ՄԻՆՁԵՎ  
== 1914 թիվը ==

№ 34

---

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՇԵՍՏ  
ՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

1. Ա. Լագովսկիի.—	«Հասնքների պայքարը համաշխարհային արհարծման մեջ», (սպառված)	
2. » »	«Արհմիությունները խնդիրներն ու դրժնակերպը», (սպառված)	
3. Ե յ դ ու ս.—	«Ակնարկներ Արեւելքի բանվորական շարժման մասին», (սպառված)	
4. Արկ-Ան.—	«Բանվ. շարժման սպառմ. Անդլիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում», (մնացել են սակավաթիվ որինակներ)	
5. «Գործարկումների և տեղկումների ուղեցույց» . . . . .		1
6. «Աշխատանքի որենտրը» . . . . .		15
7. Անտոշկին.—	«Պրոֆեսիոնալ շարժումն Ռուսաստանում», (մնացել են սակավաթիվ որինակներ)	
8. Սեմյուշկին.—	«Գործարկումների և տեղկումների անկլիքները ներկա պայմաններում» . . .	25
9. Գուլեվիչ.—	«Լենինը և արհմիությունները» . . .	50
10. Ֆարբիկանտ.—	«Սոցիալական սպահովագրությունը», (սպառված)	
11. Տ Ե տ Ե ր ի ն.—	«Ի՞նչ և արհմիության կանոնադրությունը» . . . . .	25
12. Սպերանսկի.—	«Ի՞չ պետք է իմանա ամեն մի մայրը» .	20
13. Բիխովսկի.—	«Բանվորների և ծառայողների սպահովագրությունը հաշմանդամության դեղքում», (սպառված)	
14. «Կանոնադրություն բանվորական դրագարանի» . . . . .		15
15. Չ Ե կ ի ն.—	«Ակնարկներ բանվորական շարժման սպառմությունից» . . . . .	35
16. Բժ. Մելիքյան.—	«Սիֆիլիս» . . . . .	20
17. Բժ. Կարապետյան.—	«Մալարիա» . . . . .	5
18. «Յերեք ինտերնացիոնալ», (սպառված)		
19. Գ ի ր ի ն ի ս.—	«Ի՞նչ և արհեստակցական արտադրական միությունը» . . . . .	30

ԱԳՁ  
885

1547B

331.88

Պրակտարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

Ո. ՌՈՉԵՆՖԵԼԴ



# ԱՐՅԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ՄԻՆՁԵՎ 1914 ԹԻՎԸ

Թարգմ. Վ. ՌՇՏՈՒՆԻ

ՊՐԱԿ IV



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՉՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ № 34

ՅԵՐԵՎԱՆ

1926 թ.

Շարված է «ԼԻՆՈՏԻՊՈՎ»



885-492

ՏՐԵՍԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառեպ. 413 ք.

Պատվեր 2297

Տիրած 1500

**ՎԵՐԵԼՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՅԵՎ  
ՎԵՐԵԼՔՆԵՐ ԱՐԿԵԱՐԺՄԱՆ ՄԵՋ (ՄԻՆՉԵՎ 1914 Թ.)**

(Արեշարժումն իմպերիալիզմի շրջանում)

ՎՈՐ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԼՆՔ ավելի մանրամասն կանոց  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ— առանք արհեստակցական շարժման  
ՆԵՐՆ ԵՆ ԱՐԶՇԱՐԺՄԱՆ սկզբնավորության, ինչպես նաև  
ԻՍԿԱԿԱՆ ՆԱԽԸՆԹԱՅ— նրան նախորդող բանվոր դասակարգի  
ՆԵՐԸ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ. միացման փորձերի վրա, վերապահ  
պարզ կերպով հաստատենք, թե ինչ  
ազդեցություն են ունենում յերկրի ժողովրդական տնտեսության  
բնույթը և նրա փոփոխություններն արհեստակցական միու-  
թյունների բնույթի և փոփոխությունների վրա:

Վոչ 80-ական քվականների վերջին նախորդող շրջանի ուու-  
սական փոխադարձ ոգնուքյան յեզպ գանձարկղները, վոչ ֆրան-  
սիական «կոմպանիոնաճճները», վոչ գերմանական «վարպետա-  
ցունների յեղբայրությունները», վոչ էլ վերջապես անգլիական  
արհեստավորների ֆադաֆային ակումբները (մինչև արդյունաբե-  
րական հեղափոխության շրջանը) չի կարելի դասակարգային  
արհեստակցական միությունների իսկական ստղմերը հաշվել:  
Այդ բոլոր ընկերությունները ստեղծվել են կապիտալիզմի շա-  
փաղանց թույլ շրջանում, վորը զեռ բալուչից դուրս չեր յեկել,  
յերբ խոսք անգամ չեր կարող լինել վարձու բանվորների մեծա-  
քանակ մասսայի և նրանց կեղեքիչ—գործարանատերերի ու ֆար-  
բիկանտների հակադրման մասին: Բանվորներն իրենց դասա-  
կարգային շահերը զեռ ամբողջովին չեն զխտակցում, նրանք վոչ  
միայն շատ են հեռու ամբողջ կապիտալիստական կարգի դեմ  
կռվելու մտքից, այլև խիստ սակավ են զլիմում մճոսական կռվի  
միջոցները—գործադուլների, ընդդեմ սուսանձին ձեռնարկունների,  
այդ կռվի տեղը դնելով փոխադարձ ոգնությունը՝ հիվանդության  
դեպքում, թաղման համար (և սակավ անգամ գործազրկության

դեպքում) նպաստ տալու հոգսերը,—փորձելով միջնորդու-  
թյուններով և խնդրադրերով իրենց կողմը թեքել բարձրագույն  
կառավարություններին: Միայն արդյունաբերական հեղափոխու-  
թյան և նրա հետ կապված բանվորական շարժման փոքորկուս  
վերելքները, խոշոր ձեռարկուրյուններում բանվորական մեծ-  
մասաների կենտրոնացումը, անխնա կապիտալիստական շահա-  
գործումը կյանքի յե՛ն կոչում առի՛մբուրյունների խեղճական նայ-  
րենքացներին: Ռուսաստանում—այդ մարտական գործադուլային  
գանձարկղներն են. Ֆրանսիայում—«Ընդդիմադրության ընկե-  
րությունները», ինչպես նաև 60-ական քվականներին սինդիկալ  
խորհրդարանները. Անգլիայում—մասամբ բրդա-մանածագործա-  
կան և էյուպիանային արդյունաբերության ընկերությունները,  
մասամբ ել 30-ական քվականների «փոքորկի և մզուլի» շրջանի  
մարտական միությունները և փեղերացիաները. Գերմանիայում—  
60-ական քվականների կիսին տպագրիչների և սիգարագործնե-  
րի միությունները: Այդ բոլոր կազմակերպությունները զես շատ  
հեռու յեն առկուն դասակարգային եյությունից, բանվոր դասա-  
կարգի նպաստակների ու խնդիրների պարզ ըմբռնումից, բայց  
նրանց մեջ խաղաղ փոխադարձ սցնությունը շարունակ ափելի յե  
գիջում իր տեղը կապիտալիստական ճնշմանը համարտրեն գիմա-  
դրելուն, ընդհարումներին, գործադուլներին, գործադուլային  
կոփին հանուն բանվորական սրբա կրճատման, հանուն աշխա-  
տավորձի բարձրացման, հանուն բանվորների ձիություն կազ-  
մելու իրավունքի: Յեզ միայն յերիտասարդ արդյունաբերության  
վերջնական ամբասպնուձը և ծագուձը, հազթանակող կապի-  
տալիզմի արտադրողական սձերի հզոր վեքելքը, բանվորների  
ժատասյական կոիփների սկիզբը ձեռնարկուների զեմ թույլ են  
առելիս. զոր արագ աճեն և ամբանան բանվորների յայն մասսա-  
յական կազմակերպությունները—արհեստակցական միություն-  
ներն այս բատի խեղական իմաստով:

Իսկական արհեստակցական միությունը վոչ միայն կապի-  
տալիզմի զավակն է, այլև գործադուլների, համառ, զաձան  
գործադուլային շարժման ալիքի ծնունդը: Գործադուլային ալիքի  
բազում ծագելցին 1905 թվի սուսական արհձիությունները, գոր-  
ծադուլների շրջանում են ծնվել 60-ական, 70-ական և 80-ական  
թվականների Փրանսիական սինդիկատները. համառ գործադուլ-  
ներով ելին կոփում հանուն իրենց գոյության և կոփում 50-ա-  
կան թվականների սուսջին խոշոր անդլիական արեզ-յունիները:

—«Մեխանիկների Ամսդամյայ ընկերությունը» և կառուցողների ընկերությունները դաժան ընդհարումներով սովորեցին և օձեցին 60-ական և 70-ական թվականների «ազատ» սոցիալ-դեմոկրատական միությունները, առանց այդ չեր նաև «Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայի» ծնունդը և դրան հետևող 80-ական թվականների Ամերիկայի բանվորական շարժումը:

ՎԵՐԵԼՔՆԵՐ ԳԵՐ-  
ՄԱՆԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱ-  
ԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՅԵՎ ԱՐԶԵԱՐԺՄԱՆ  
ՄԵՋ

Թվում էր, թե բանվորական շարժման հետևող շրջանը պետք է պրոլետարիատի դասակարգային կռիվն էլ ավելի մեծ թափ տար, էլ ավելի մեծ չափով հեղափոխականացներ արհմիությունները: Սակայն այդ տեղի

չունեցավ: Բանվորական և արհեստակցական շարժման ներսում խոչոր հակաուժիւթյուններ ծագեցին: Իրոք Յեվրոպայի ամենաչիտավոր արդյունաբերական յերկրներում և Ամերիկայում կապիտալիզմը զարգացման բարձր ստորճանի հասավ, ամբանալով վոչ միայն յերկրի ներսում, այլև բազմաթիվ արտաքին շուկաների, կոդուպում գաղութները հաղթին: Սակայն ինչքան ավելի հաջող է զարգացնում իր արդյունաբերությունը և ինչքան ավելի շուտ և հարստանում կապիտալիստական յերկիրը, ինչքան ավելի յավ և ապրում վորակյալ, յավ վարժված բանվորների վերին շերտը ի հաջիվ ազանների վոլորմության, վոր տրվում է նրանց բուրժուազիայի գեր-վաստակներից, ինչքան ավելի ճարպիկորեն և հիժարացնում կապիտալիստների ուժեղ դասակարգն իր բանվորներին ամեն տեսակ եժան յոսյճերով, ինչպիսին են «գեմսկրատական ազատությունները», «ընդհանուր բնարողական իրաւունքը» և այլն, — այնքան ավելի վասուղ և սակցժվում արհեստակցական միությունների համար՝ ալլատերերով դեղին համաճանողական միացումների փոխվել և բանվոր դասակարգին արտաազրելու ձգտող կռիվ միություններից, կապիտալիստական կարգի հենարանը դասուղ:

Մեքե արդեն Անգլիայի և Ամերիկայի որինակներով ցույց ավեցինք, բե ինչպես են կատարվում այդպիսի փոխարարերբությունները: Գերմանիայում էլ վաղ և ծագում այդպիսի փոխարարերբությունը:

80-ական և 90-ական թվականների վերջին Գերմանիան ալլապորեն բարձր զարգացման հասած կապիտալիզմի յերկիր և

դառնում և համաշխարհային առաջնութեան և ձգտում: Այդ առթիվ խոսք տանք գերմանական խոշոր արեստներից մեկի վարչութեան նախագահին 1913 թ. հերթական բանկետներից (հանդիսավոր ճաշերից) մեկում:

— Մենք, գերմանական արդյունաբերողներս և գործարանատերերս, ազդի ծաղիկներս, կարող ենք ներկայումս հզարտաճառ, վոր մեր թանկագին հայրենիքը հաջող կերպով զարգացնում է իր ժողովրդական անտեսութեանը: Մեր Գերմանիան շատ հետև թողել թե՛ Անգլիային, թե՛ Ֆրանսիային: Ամբողջ աշխարհում մեզ գերազանցում և միայն Ամերիկան:

— Յես ձեզ չեմ հոգնեցնի թվերի յերկար շարանով, բայց միայն կնիշմ հետևյալը. 1890—1913 թ. թ. շրջանում մենք մեր ամուսին արդյունահանութեանը մեծացրինք համարյա յերեք անգամ, հավասարվելով Անգլիային, չուզուն մենք այս տարի ավելի շատ ենք հայել, քան Անգլիան և Ֆրանսիան միասին առած իսկ պողոտա—հասուկ ու չաղբութեան դարձրեք—այլևի շատ քան Անգլիան, Ֆրանսիան, Բելգիան և Ռուսաստանը միասին առած: Մեր հիանալի կազմակերպված արդյունաբերութեանը ներկայումս սեղմված են հզոր արեստների ու սինդիկատների մեջ, գործնք թույլ են առլիս մեզ, գերմանական արդյունաբերողներս, միացնել մեր ուժն ու հզորութեանը\*): Մենք մեր այլ

\*) 1913 թ. Գերմանիան պողոտա և արդյունահանել 19.6 միլ. տոնն, հանդեպ Անգլիայի 7.7 միլ. տոննի, Ֆրանսիայի 4.6 միլ. տոննի, Բելգիայի 2.5 միլ. տոննի և Ռուսաստանի 3 միլ. տոննի:

Տեխնիկայի փայլուն զարգացման պայմաններում գերմանական արդյունաբերութեանն արագորեն սեղմվում և հզոր միացումների մեջ: 1882 թ. խոշոր ձեռնարկութեանների մեջ (վորոնցից ամեն մեկում բանվորների թիվը 50 բարձր է) աշխատում էր բոլոր բանվորների 22 տոկոսը, իսկ 1907 թ. այդպիսի 30,588 ձեռնարկութեանների մեջ (ընդհանուր թվի 0.9) աշխատում էր բանվորների 39.5 տոկոսը (5.7 միլ. 14.4 միլիոնից) և նրանց ընկնում էր յերկրի շոգու ուժի 75 տոկոսը (6.6 միլ. ձիու ուժը 8,8 միլ. ձիու ուժից) և էլեքտրական էներգիայի 80 տոկոսը (1,2 միլ. կիլովատ 1,5 միլ. կիլովատից):

Իսկ 100 բանվորից ավելի ունեցող ձեռնարկութեանների թիվը Գերմանիայում 1907 թ. —586 էր, այսինքն ընդհանուր թվի



ուժն ու հզորութիւնը մեր մրցակիցներին զգալ կտանք: Մենք գիտենք, զոր Ֆրանսիացիները յերազում են ռեվանշի (վրեժխնդրութեան) և մեր գերմանական ածուխի մասին: Բայց զրանից ավելի շուտ Ֆրանսիական սահմանամերձ յերկաթահանքերի արագանի վրա կարող ե գերմանական դրոշակը ծածանվել:

— Մենք պահանջում ենք համաշխարհային շուկայում մեր բաժինը, մեզ զազուժներ և պետք, մեզ վաճառահանութիւն և պետք: Մենք պետք ե իր տեղը նստացիներ ծովերի ալը հնարատիրոջը, Անգլիային, վորին մենք այնուամենայնիվ այժմ ամեն բայլափոխին հարվածում ենք: Մեր ժողովրդական տնտեսութեան ներքին ստեղծագործող ուժերը զարմանալի յեն.— դեռ վերջերս մենք առեարական չնչին նախատորմիլ ունեյինք, իսկ 1870—1900 թ. թ. չըջանում նա 2 և կես անգամ մեծացել և ե դուրս ե գշել Համբուրգի նախահանգստից անգլիական նախերը:

Տեղից մի ձայն. «Իսկ անգլիական գրեթէտուղնե՞րը»:

— Գերմանիան նրանցից չի վախենում: 90-ական թվականներին մեր ռազմական տորմիդը 5 անգամ ավելի թույլ եր անգլիականից: Մենք այն ժամանակ 5-րդ տեղն ե յինք բռնում (նույնիսկ Ռուսաստանից հետ ե յինք), իսկ ներկայումս հսկայական նախաշինարարութիւնից հետ, մենք աշխարհի բոլոր պետութիւններից առաջ ընկանք և Անգլիայից հետո յերկրորդ

<sup>1/60</sup> մասը: Նրանց եր ընկնում բանվորների ընդհանուր թվի համարը <sup>1/10</sup> մասը (1.380.000 մարդ), շոգու և ելեքտրական ուժի ընդհանուր գումարի համարը կեսը (32 տոկոս): Մասնախորապետ լեռնային և լեռնագործական առարկիդում խոշոր ձեռնարկութիւններն ընդգրկում են բանվորների 96,6 տոկոսը, քիմիական արդյունաբերութեան մեջ—70 տոկոս, մանածագործականում—67,6 տոկոս և այլն:

Գերմանական Հռենոս-Վեստֆալյան ածխային սինդիկատը 1913 թ. արդյունահանել և Ռուրի ածուխի արտադրութեան 92,6% (և համայն գերմանական արտադրութեան 54%):

Պողպատի սինդիկատն իր բաժինը հասցրեց մինչև 43—44%, շաքարինը—ներքին վաճառահանութեան մինչև 70% և արտաքին 87%, ելեքտրական ամբողջ արդյունահանմիլը եներդիայի մինչև 40%:

Գերմանիայի առաջադիմութիւնն ել ավելի ակնառու յե հանդես գալիս հետեյալ արդյուսակի մեջ.

տեղն ենք բնում բոտ մեր սագմական տարմիցի հզորութեան : Այս տարի յերկրորդ տեղն ենք բնում, բայց մի քանի տարի մեզ ժամանակ տվեք, և մենք Բրիտանիայի սուլուծին կը հարկադրենք խոնարհվի մեր գերմանական առժվի առաջ :

Այդ ամբողջ փայլուն արդյունարերական վերելքը, վարի մասին բանկետում խոսում էր տրեստի նախագահը, գերմանական իմպերիալիզմի այդ հզոր աճումը, քայքայել ազդեցութեան էր ունենում գերմանական բանվոր գառակարգի մի նշանավոր մասի վրա : Մի կողմից, համապատասխան գերմանական արդյունարերութեան աճման և միացման, արագ աճում էին և ամբանում բանվորների հզոր միացումները—արհեստակցական միութեանները : Իսկ մյուս կողմից բարձր վարակյալ բանվորների դրութեանը նշանավոր չափերով լայնանում էր և նրանք շահագրգռված էին գառնում ազդային հարստութեան աճման մեջ, Գերմանիայի «թշնամիներին»—Անգլիայի և Ֆրանսիայի դեմ ուղղված կռիվի մեջ : Այդ պատճառով նրանց մեջ հեշտութեամբ զարգանում է այն սրտակերացումը, վոր հնարավոր և սցեխալից մի անցնել է՝ չէ՛ր կայտալիցմի գեծ վճռական կռիվ բռնկելով, այլ աստիճանական սեփորմների և բուրժուազիայի հետ սեխատակցելու կարգով : Հետևե՛նքն այն և լինում, վոր արդեն Յոսական թփականների վերջերին, յերբ, համապատասխան հաստատուն անտեսական վերելքին, Գերմանիայի արհեստակցական

	Քարածուխի արդյունահանութեան աճումը (միլ. տոն.)			Չուգունի հալումը (բոտ Ե. Գյունտերի) (հազ. մետր. տոն.)		
	1890 թ.	1913 թ.	Աճման % <sub>0</sub>	1890 թ.	1913 թ.	Աճման % <sub>0</sub>
Գերմանիա . . . . .	110.0	277.0	152	4,625	19,309	317
Անգլիա . . . . .	184.5	292.1	54	8,052	10,647	32
Ֆրանսիա . . . . .	26.0	40.8	64	1,962	5,100	163

1870 թ. գերմանական առևտրական տորմիցի ջրի մեջ բռնած տարածութեանը 782.3 հազ. տոնն էր (նետոս), իսկ 1900 թ.— 1,737.8 հազ. տոնն : 1897—1907 թ. թ. շրջանում Գերմանիայի առևտրական նավադնացութեան աճման տակտոր 281 է, ընդդեմ Անգլիայի 184% և Ֆրանսիայի 70% :

միություններն ամբողջով, հզոր ուժ գործան, գերմանական արի-  
շարժման դեղին առաջնորդները (Կ. Լեզիեր և ուրիշները) երմ-  
տորեն ոգտագործում են այդ մարտական ուժը վաչ թե կալի  
նպատակների համար, այլ այն բանի, վոր բոլոր ընդհարումները  
անոնարկությունի հետ խաղաղ կերպով կարգավորվեն: Անդրիասի  
նման, գերմանական միությունների աշխատանքի հիմքն են դառ-  
նում փոխադարձ ոգնության հզոր ֆոնդերի կուտակումը, հա-  
մարական պայմանագրերը:

Վոր գերմանական դեղին միությունները չեն հասկանում  
պրոլետարիատի դատակարգային շահերը, այդ վառ կերպով  
արտահայտվում է նաև նրանց վերաբերմունքի մեջ դեպի մայրի  
մեկի տներ և դեպի բնականուր գործադուլը: Ահա յանք գեր-  
մանական պրոֆեսիոնալիստների գրույքը:

Պայժառ զարնանային որ եր, վոր հաճախ չի կարելի տես-  
նել Բերլինում ապրիլի սկզբին (վորովհետև այդ որը ճիշտ վոր  
1914 թվի ապրիլի որերից եր): Խոչոր մեքենաշինարարական  
գործարանի բախում, փականագործների համքարության մոտ,  
ճաշի ընդմիջումի ժամանակ հավաքվել էյին 50 մարդ և ա-  
մուր ողակել վիճոգների վորքիկ խմբակը: Իսկ վեճն առաջի-  
կա մայրի մեկի տնակատարությանն եր վերաբերում: Խո-  
սում եր պատահամբ գործով գործարանը մտած մետադագործ-  
ների միության Բերլինի վարչության անդամ ընկ. Ռիտմանը:  
Նրան առարկում եր ընկ. Կելլերը, գերմանական սոցիալ-դեմո-  
կրատական կուսակցության ճախ վորամասնության անդամը:

— Բանն ինչումն է, ընկեր: Ինչո՞ւ համար բռնվեց այս ամ-  
բողջ վեճը: Շարունակ կրկնում են—«Մայրի մեկը», հա՛ «Մա-  
յրի մեկը», «գործադուլներ», «փոզոց գուրո գայ» և այլն: Այդ-  
պիսի չուտափույթ վճիտներ մեր միությունը չի կարող ընդու-  
նել: Վո՞րն է արհեստակցական միության հիմնական խնդիրը:  
Իանվորների նյութական գրության բարելավումը, նրանց աշ-  
խատանք տալը, բնդ վորում լավ վարձատրվող աշխատանք:  
Դրա համար մենք տնտեսատերերի դեմ կռիվ ենք մղում: Բայց  
ինչպես ենք կռվում մենք: Խեղացի, զղույշ, հավաքական պայ-  
մանագրեր կնքելով և այլն: Հիմարություն կլինեք մեր կողմից,  
յեթե մենք թույլ տայինք, վոր մեզ քաշելին վճուական բնդ-  
հարման, գործադուլի մեջ: Չե՞ վոր տնտեսատերերը մեզանից  
ավելի ուժեղ են: Մենք ոգտվում ենք հաշտարար սայտաններից,  
միջնորդ գնատարաններից, այն էլ մե՞ծ հաջողությամբ:

— Այո՛, ի հարկե, հաջողութեամբ, բայց ո՞ւմ համար :

— Համենայն դեպս ավելի հաջող, քան դուք ձեր գործադրուիներից :

Չե՞ վոր վերջի ի վերջո ինչ կկարողանա տալ ձեզ այդ մայրամեկյան գործադուլը : Ձեր դատո՞ւմը կավելացնի նա, ի՞նչ է : Գործադրութեանը կբնութագրի : Ընդհակառակը, նա ձեզ կկոչապնի անտեսաւորութի հետ, ընկերներ, նա տասնյակներով ձեզ դուրս կչարտի գործարանից : Իուք ինքներդ հետո կսկսեք անիծել ձեր անխոհեմութեանը : Յեւ ահա այդ պատճառով մենք ձեր միութեան վարչութեանը, անհրաժեշտ ենք համարում մայրամեկին գործադուլից հրաժարուիլ : Ա՛խր վերջապես բանն ինչո՞ւմն է, ընկ. կելլեր : Իուք ինքներդ զիտեք, վոր ներկայումս նույն հայացքն ունի նաև ձեր սեփական կուսակցութեանը :

— Ամոթ եւ խայտառակութեան : Խայտառակութեան Մարքսի հետևորդներին եւ աշակերտներին, վոր համաձայնողական ճահիճի մեջ են ընկել : Ինչո՞ւ յենք մենք պահանջում մայրամեկյան գործադուլը : Իսկ Բնակչությանը սահմանած որն է, բանվոր դասակարգի միջազգային համերաշխութեան որը, բոլոր յերկրներին պրոլետարիատի տոնը :

— Լա՛վ, տոնք այն մայրամեկին յերեկոյան :

— Յերեկոյան : Ձեկուցո՞ւմ լսել բանվորական Տ-ժամայրամեկյան որովա մասին : Տնտեսաւորներին չբարեկամելով : Վո՛ւ, այդ որն ամենուրեք աշխատանքը զազարեցնելով, մենք հիշեցնում ենք կապիտալիստներին, վոր միշտ նրանց ստրուկները չենք լինելու, վոր հետո չի այն ժամը, յերբ պրոլետարիատը գեն է չարտելու, բուրժուազիայի իշխանութեանը : Յեւ բուրժուազիան ամենեին այնպես համար չի, — նա հիտնալի զիտակցում է այս բոլորը եւ մայրամեկին տոնակատարութեանը պատասխանում է կապարով եւ ձերբակալութեաններով : Բայց մենք կկարողանանք հակադրել նրա միացմանը եւ կազմակերպութեանը մեր յերկաթե կամքը, մենք կկարողանանք վերջի վերջո ջարդել նրա հզորութեանը :

— Զարդե՞լ : Ինչո՞ւ : Չլինի՞ թե գործադուլով :

— Այո՛, թեկուզ հենց գործադուլով : Մենք չառ լավ գիտենք, վոր դուք, ընկեր Ռիտման, եւ բոլոր ձեր նմանները վաղ միայն մայրամեկյան գործադուլին դեմ եք, այլև ընդհանրապես ամեն մի գործադուլին դեմ, ամեն մի կովի դեմ : Իսկ ահա մենք

գործադուլի կողմնակից ենք, յս՞ում եք, կողմնակից գինված ապրտամբության :

— Ի՞նչ սասկ կուզի, վոր ընկեր կելլեր, ձեր ասածն ասացիք: Արդյոք դիտեք, թե ի՞նչ է նշանակում բանվորներին բնդհանուր քաղաքական գործադուլի կոչ անել: Այդ նշանակում է բանվոր դասակարգին դատապարտել ջախջախման, խորտակել այն բոլորը, ինչ վոր մենք, Գերմանիայի արհեստակցական միություններս ձեռք ե՛րս բերել համառ աշխատանքով ու կրօնով ասանյակ տարիների ընթացքում: Վերջրեք: 1905 թվի սուսական հեղափոխության փորձը: Ի՞նչ արդյունք տվեց ընդհանուր քաղաքական գործադուլը: Արյունոտ բաղնիք Ռուսաստանի բանվորների համար: Ով կողմնակից է ընդհանուր քաղաքական գործադուլին, նա կործանում է բանվոր դասակարգին, նա դավաճան է:

— Գուք եք դավաճան, — աչքերը փայլեցնելով խառնվեց մի յերիտասարդ ուսու, վոր մինչև այժմ լուռ կանգնած էր: Մեր Գլխիանովի նման դուք ել հեծկլտում եք. «Ա՛խ, ինչո՞ւ 1905 թ. դեկտեմբերին կազմակերպից Մոսկովայի գինված ապստամբությունը»: Բայց յեթև 1905 թվի ընդհանուր քաղաքական գործադուլը չլիներ, ապա մեզ մոտ, Ռուսաստանում ամենեին հեղափոխություն չեր լինի, նույնիսկ չեր հաջողվի հոկտեմբերյան պոչատ սահմանադրությունը սրկել: Ընդհակառակը, վատ եր այն, վոր մեր բանվոր դասակարգն իր ամբողջությամբ բավականաչափ դիտակից դուրս չեկավ, վոր լայն քաղաքական կոխիք հետագայում ել համառորեն առաջ տաներ, վատ եր, վոր մեզ չպաշտպանեց հետամնաց դյուրացիությունը: Բայց ապա ուշադիր նայեք, թե այժմ ի՞նչ է կատարվում մեզ մոտ, Լենայի անցքերից հետո, թե ինչպես է աճում մեր ազդեցությունը, բայլլեիկների կուսակցության ազդեցությունը: Իսկ ինչո՞ւ յե աճում: Վարովհետև մենք ձեզ նման բանվորների դուռեր չենք յեղում, բուրժուազիայի պոչը չենք գտնում, այլ նրանց անհաշա կովի, գործադուլների, ընդհանուր քաղաքական գործադուլի և գինված ապստամբության ենք կանչում: Իսկական հեղափոխությունը միայն այս յեղանակով է կատարվում:

— Իսկ յես ձեզ, ուսներիդ մի բան կասեմ. — դուք այդ քաղաքականությամբ ձեր բանվոր դասակարգին կկործանեք իսկ մենք, գերմանական արհմիություններս, մեր խոհուն տրն-

ուեսական աշխատանքով լավագույն սպաղա կնիվաճենք Գերմանիայի բանվորի համար :

— Ավելի լավ է, ընկեր Ռիտման, այդ ծաղրը թողնեք : Դուք, յերբ ցանկանում եք, կարողանում եք քաղաքականությունն էլ լավական ճարտկորեն սգաազարծել : Ձե՛ վոր դուք միայն մեաազարծների միության վարչության անդամ չեք, դուք անդամ եք նաև սոցիալ-դեմոկրատական կուսակցության : Եւ քաղաքականություն, այնուամենայնիվ, ձեր աշխատանքի մեջ մտնում եք : Բայց զիտե՞ք ինչ քաղաքականություն : Բուրժուական քաղաքականություն :

— Ի՞նչ :

— Հուզվելու կարիք չկա : Մենք, բայցլեիկներս, սովորել ենք իրերն իրենց անունով կոչել : Վոչ վորքի համար զազանիք չե, վոր այժմյան գերմանական սոցիալ-դեմոկրատիան արդեն Բեյերի և Լիբիկենխտի կուսակցությունը չե : Նա Բեյերնշտեյնի և Շեյդեմանի կուսակցությունն է, մենչեիկ-համաձայնողականների կուսակցությունը : Ճիշտ է, բուրժուական թերթերը, — նա ձեռքումս է նրանցից մեկը, — ձեր մասին գրում են, իբրև մի ահեղ ու մի մասին, դուք, ասում են, 1903 թվին 3,010,775 ձայն եզ ստացել, իսկ 1912 թվին 4,250,000 ձայն : Բայց իրենք կաշխատյիսաները ձեզանից շատ էլ չեն վախենում : Նրանք շատ լավ անում են, վոր դուք, ինչպես նաև Փրանսիական սոցիալիստները, լավականաչափ գրավվել եք պարլամենտական կուլիքնորական հաջողություններով : Ձեր կուսակցության անդամների թիվը 1912 թվին ընդամենը 1,100,483 էր, այսինքն՝ ձեզ լայն տվող ամեն մի հարյուր ընտրողից միայն 22,8 էր կուսակցության անդամ : Մնացածների մի նշանավոր մասը մանր-բուրժուական ուղեկիցներն էյին, մանր և մագամր միջակ բուրժուադիալի անկաշուն շերտերը, վորոնք խոշոր կապիտալի ճրնչման տակ քայքայվում են և փրկություն են վորոնում սոցիալ-դեմոկրատիայի պաշտպանության մեջ : Իսկ ձեր կուսակցության բանվորական կորիզն ընդամենը միայն մի յերրորդից մինչև կենն է, այն էլ առավելապես համարված և պրոլետարիատի վարակյալ կադրերից : Ձեզ սանձել ու առաջ է տանում ձեզ ընտրող ուղեկիցների մանր-բուրժուական մասը : Միթե դուք բանվոր դասակարգի կուսակցություն եք : Վոչ, դուք մանր-բուրժուական կուսակցություն եք :

— Ի՞նչ կասե՞ք, բնկեր կեցիերք, սրինակ, նո՞ւյնպէս մանրութեամբ յե :

— Ախր չե՞ վոր նրա նմաններն անհասներ են, իսկ յես խոսում եմ ձեր և ձեր նմանների մասին, յես խոսում եմ նույնպէս կուսակցական շինովնիկութեան այն շերտի մասին, վոր սակեղծ վե՛լ և ձեր կուսակցութեան մեջ և անսրբնում և նրա բարեւար: Ձեր կուսակցութեանը մանր դիջումների կուսակցութեան և, մանր ակֆորմների կուսակցութեան և, և այլ շատ և դուր դայիս ձեր արժաւորութեաններին: Գերմանական արճարման գեղին վերին շերտն այժմ շարունակ ավելի յի միանում համաձայնողական սոցիալ-գեմոկրատական կուսակցութեան հետ, նա հենց կուսակցութեան մեջ գեկավար պաշտաններ և ձեռք ձգում և վերջնականապէս սպանում և նրա հեղափոխական ելուցութեանը\*): Ի՞նչ, փոխանակ բանվոր գոտակարգի առաջնորդները լինելու նրա գոտակարգային հեղափոխական կուլի մեջ, պարզապէս դարձել և բերմանական իմպերիալիզմի արբանայակներ:

Ռուսն իսկապէս ճիշտ կերպով վորոշեց գերմանական արճարմութեանները և գերմանական սոցիալ-գեմոկրատական կուսակցութեան գերբ: Գերմանական արդյունաբերութեան աճումը, հաղթականորեն գարգացող գերմանական իմպերիա-

\* ) 1906 թվին պրոֆեսորնայխտ-համաձայնողականներին: Գարաց պաշտպանում եր կուսակցութեան աջ թեւը, հաջողում և Մանհայմի կուսակցական համագումարում հարկազրկել կուսակցութեանը հրաժարվել այն մարքսիստական հայացքից, քե տնկրածեշտ և, վար պրոլետարիատի հեղափոխական-բաղաբան կուսակցութեանը դեկավարի արիստակցական շարժումը: Իրա փոխարեն մի բանաձև և բնգունիում, վոր արճարմութեանները և կուսակցութեան շահերը միատեսակ շուտուող միատեղ յերույթներն իրականացնելու համար, յերկու կողմակերպութեանների կենտրոնական վարչութեանները պետք և համաձայնութեան գտն:

Այլ, ի հարկե, արճարմութեանները լիովին չի կարում սոցիալ-գեմոկրատիայից, բայց ավելի սե՛շտ միութեան և սակցումում արհեստակցական գեղին ու կուսակցական գեղին չի նովնիկութեան մեջ և բոս ելուցութեան տանում և գեկի բանվոր գոտակարգի շահերի դաժաճանութեանը:

իղմը մի կողմից, շատացնում եր պրոյետարները կազմը, յերևա առ յերև լայն բանվոր մասսաներին հակադրում եր կապիտալիստներին և հարկադրում եր նրանց կազմակերպվել, մասսայական միություններ, հզոր արհմիություններ ստեղծել: Իսկ մյուս կողմից նույն ալլ իմպերիալիզմը նպաստում եր բանվորական կազմակերպություններին ներքին, վորակական քայքայմանը, նրանց հեղափոխականության և անհատ դասակարգային կռիւն անհրաժեշտության դիտակցության կորցնելուն. Գերմանական մենչեիկացոյ սոց.—դեմոկրատական կուսակցության միությունը գերմանական արհարծման ղեկավար զեղին օկֆորմիստական շրջանների հետ, այն բանին հասցրեց, վոր վերջինները դավաճանեցին հեղափոխական դասակարգային արհարծմանը և նրա վերջնական նպատակին—կապիտալիզմի տապալմանը: Յեւ վարժմանալի չե, վոր հզոր կերպով հարձակվող կապիտալի և 1914 թվի մեծ յեվրոպական պատերազմի մոտեցող բռնկման հանդեպ Գերմանիայի թե՛ կուսակցությունը և թե՛ արհմիություններն անզոր դուրս յեկան:

### ՖՐԱՆՍԻԱ:

Ֆրանսիական հեղափոխական անարխտսիմոնիկալիզմի վերասերման մասին 20-րդ դարի սկզբում, մեմֆ արդեմ վերը խոսեցինք: Ընկրտեալ ե մի անգամ ել ոչեյ ալլ վերասերման կապի այն առաջադիմական կարուկ քոիչֆի հետ, վոր յերկարատե լնացումից հետո, նորից անում ե փրանսիական ժամր արդյունաբերությունը 1902—1913 թ. թ. շրջանում: Յերկաթահանքի արդյունաբերությունն աճեց յերեք և կես անգամ:

Ալլ միությունը լիակատար հաջողությամբ պսակվեց: Չնայած գերմանական սոցիալ—դեմոկրատիայի հեղափոխական փոքրամասնության ընդդիմությանը, 1913 թվին Յենայի կուսակցական համագումարում արհմիություններին հաջողվում ե վերացնել տալ այն պարտադիր մասնատրումը, վորով ամեն տարի արհատակցական և կուսակցական կազմակերպությունների բոլոր կուսակցական ծառայողների մեկ որվա աշխատավարձը մուլիսի ֆոնդին եր հատկացվում, այսինքն՝ անց են կացնում իրենց տեսակետը, վոր մայիսի մեկը տոնելը պետք չե: Նույնպիսի հաղթանակ են տանում նրանք ալլ համագումարում և ընդհանուր քաղաքական գործադուլի հարցում:



Յեթե ըստ արդյունահանված շուգունի և սողպատի քանակի՝ Թրանսխան դեռ խիստ հեռու մնում Յեկրսուպայի մյուս յերկըր-ներից, ապա ըստ անման արագության տվյալ տեսակետից նա արդեն գնում է Գերմանիայի հետ հավասար և Անգլիային\*) շատ հեռու է թողնում: Թրանսխայի արտաքին առևտրի շրջանառու-թյունը 1905 թվին ընդհանուր առմամբ 9,644 միլիոն Փրանկից անց 1913 թվին մինչև 15,351 միլիոն Փրանկի: Այդպիսով թե՛ Գերմանիայում և թե՛ Թրանսխայում արտաքին առևտրի շրջանառությունը ընդհանրության ամեն մի շնչի համար միատե-սակ մակարդակի հասավ՝ 385 մարկի:

Քանի դեռ Թրանսխայում արդյունաբերությունը լճացման վիճակում եր գտնվում և բավականաչափ զարգացած չէր, նրա մեջ գլխավոր դերը խաղում էին ժողովրդական անտեսությա-նը սպասարկող բանվորները (կառուցողները, քարահանքի բան-վորները, խճուղային բանվորները և այլն): Ընդհանուր առմամբ ցածր վորակ ունենալով, նրանք չէին կարող արեղ-յունիտներ և հզոր Փանդեր կազմել, Փինանտակական կապիտալի ճնշման տակ գտնվելով, նրանք իրենց վերկուսյունը գեղդակի գործու-ղության, այն է՝ ընդհանուր գործազուլի, յուրատեսակ, բայց վս-տահուն հեղափոխության մեջ էլին տեսնում: Այդպուևաբերական վերելքի նոր ալիքը Թրանսխայում բանակապես ավելի յե ուժեղու-ցնում վարակյալ միջախավերին—մետաղագործներին, սպագրիչ-ներին, մանածագործներին և նրանց միությունները: Նրանց աչ-

\*) Այդ ակնհայտ և գտնում հետևյալ աղյուսակից:

	Չուգունի հալելը (հազ. մետր. տոններով)			Պողպատի արդյու- նահանությունը (միլ. մետր. տոն.)		
	1902 թ.	1913 թ.	% ա- ճույթ	1902 թ.	1913 թ.	% ա- ճույթ
Թրանսխա . . . . .	2,405	5,207	116	1,5	4,6	206
Գերմանիա . . . . .	8,530	19,291	126	7,4	19,9	169
Անգլիա . . . . .	8,819	10,424	19	4,0	7,7	92

Յերկաթհանք 1903 թ. արդյունահանված է 6,220 հազար տոնն, իսկ 1913—21,918 հազ. տոնն:

խառախարհն ածուած է, բայց դրա հետ միասին ուժեղանում է նախնական սեփորմիզմը (համաձայնողականութունը), այդ բան-  
 վորներին համակրութունը դեպի Փրանսիական խմբերիալիզմի  
 տնուսը, վոր նոր զաղութներ եր դրալում, դրանով Փրանսիա-  
 կան արդյունարերության համար նոր շուկաներ ձևոք բերում,  
 ապա ուրեմն՝ նոր դատումներ բանխորների համար:

20-րդ դարի յերկրորդ տասնամյակի ընթացքում Փրանսիա-  
 կան սինդիկատները կորցրին իրենց անցյալի հեղափոխական  
 (թեկուզ և անարխո-սինդիկալիստական) վաղին:

ԱՐՀՇԱՐԺՈՒՄԸ ՉՏԵՍ— Ամերիկայում կապիտալիզմը շը-  
 նելած—ՀՁՈՐ, ՀԱՄԱ— տեսված զարգացման և հասնում և  
 ԿԵՆՏՐՈՆԱՅԱՍԾ ՅԵՎ— 1905 թվին աշխարհի բոլոր յերկրներին  
 ԿԵՆՏՐՈՆԱՅԱՍԾ ԿԱ— իրենից շատ հետ և թողնում: Ամբողջ  
 ՊԻՏԱԼԻ ՅԵՐԿՐՈՒՄ: արտադրության յերեք քառորդը և ար-  
 ԱՄԵՐԻԿԱ: դյունարերության մեջ զբաղված բո-  
 յոր բանվորների 70 %-ն Ամերիկայում կենտրոնացած եր այն ձևո-  
 նարկությունների մեջ, վորոնք միացած էլին արեսաներում: Շնոր-  
 հիվ առանձին արեսաների իրար հետ ձուլվելուն, սակզմվում էլին  
 մեծաքանակ հզոր արդյունարերական կազմակերպություններ,  
 ինչպես Ալյորբի խմբակն և, վոր միացնում և ամենատարբեր  
 տեսակի ձևոնարկություններ և արտադրության ճյուղեր, և  
 օրբիչները: 20-րդ դարի սկզբում հինգ արդյունարերական  
 թաղավորներ (Ռոկֆելլերը, Հարրիմանը, Մորգանը, Վանդերբիլդը  
 և Հուլզը) 16 միլիարդ ոտրյա հասնող կապիտալ ունեյին ի-  
 րենց արածադրության տակ, այսինքն՝ Ամերիկայի բանկերի և  
 արդյունարերության գործում յեղած կապիտալի կեսը\*):

\*) Հ. Ա. Մ. Նահանգների արդյունարերության աճումն սկ-  
 նառու ցույց ևն ապիս հետևյալ աղյուսակները:

	1890 թ.	1905 թ.	Աճումն %
Փար. - գործ. ձևոնարկություն. թիվը	355,415	533,769	50
Բանվորների թիվը	4,251,613	5,310,548	25
Ներդրած կապիտալը (միլ. դոլլարն.)	6,525	13,872	112
Առարկաների գինը (միլ. դոլլարն.)	9,372	16,866	80

Այսպիսի պայմաններում արտադրութեան մեջ խիստ նշանավոր է դառնում անվարժ բանվորների կամ քիչ վարժված բանվորների դերը: Յեւ վորովհետեւ ամերիկյան կապիտալիստները դաժանութեամբ են ճնշում բանվորների ամեն մի կազմակերպման փորձը, ապա Հ. Ա. Մ. Նահանգների բանվոր դասակարգի մեջ դեղին արհմիությունների հիմնական մասսայի կողքին ծագում են հեղափոխական փոքրամասնության ապստամբական—մարտական կազմակերպություններ, վորոնք բաղկացած են վոչ—վորակյալ և ամենից ավելի շատ մեշված բանվորներից: Այդպես է այն կազմակերպությունը, վոր «Ալխարհի Արդյունաբերական բանվորներ» անունն է կրում:

Հատուկ ջանքեր են թափել այս վորքերի, բայց մարտական կազմակերպութեան ստեղծման վրա հանքափորներն ի դեմս հեղափոխական «Հանքափոր բանվորների Արեւմտյան Ֆեդերացիայի», վոր հիմնվեց 1893 թ. և շուտով միացրեց իր տեղի հանքափոր բանվորների նշանակալի մասսային ըստ արտադրութեան, անկախ նրանց այս կամ այն արհեստից: 1905 թ. կայացավ «Ալխարհի արդյունաբերական բանվորների» հիմնադիր կոնգրեսը, վորտեղ ներկայացված էին 51,430 մարդ:

Արդյունահանված է	1890 թ. Հ. Ա. Մ. Նահանգներ.	1905 թ.		
		Մ. Նահանգ.	Անգլիա	Գերմանիա
Ածուխ (միլ. տոնն)	140,9	406	244	136,5
Չուգուն (տոն)	9.347	23,361	19.762	10,814

Բամբակեղենի գործը 1870 թ. 7 միլ. էլիկ ուներ, իսկ 1905 թ. 2,750 միլ. ֆունտ:

Միլիոն և ավելի բարձր դուլլարի արտադրութեան ունեցող խոշոր ձեռնարկությունների թիվը 1905 թ. ընդամենը 3,060 էր (ընդթիվի 1,1%), բայց դրա միոխաբեն նրանք միացնում էին 2 միլ. բանվորների (ընդ. թիվի 30,5%) և 9 միլիոնի ապրանք էին մշակում (ընդ. գումարի 48,8%):

1904 թ. Ամերիկյան արեստներն ընդգրկում էին բոլոր ձեռնարկությունների 23,8%: Այդ ձեռնարկությունների մեջ գրադվում

Բայց թող «Ա. Ա. Բ.» իրենք խոսեն իրենց մասին :

1905 թ. ուշ աշնանը Մ. Նահանգների Արևմուտքի քարածխային տրեստի խոշոր հանքավայրերից մեկում գործադուլ բռնկվեց : Գրեզոված ամբոխը հեղեղի պես թափվեց լայն, ցանկապատով կտրած հրապարակը, վոր գտնվում էր հանքային վարչության ցածրիկ փայտե տնակի առաջ, վորտեղից մի ժամ առաջ ձիերով շտապ հեռացավ ամբողջ վարչությունը : Փայտե արկղներից կառուցած ամբիոնից խոսում էր մի նիհար յերիտասարդ բանվոր, վորին ամեն բոլեք ընդհատում էին հավանության բուռն բացահանչություններով և աղաղակներով :

— Ընկերներ : Ինձ ձեզ մոտ և ուղարկել Ամերիկայի «Աշխարհի Արդյունաբերական Բանվորների» հեղափոխական կազմակերպությունը : Կապիտալի ճնշումն այժմ անհանդուրժելի յե դարձել : Մենք սրական աշխատում ենք 12 ժամ, իսկ ստանում ենք դրոշմեք և ափսիս վատ ենք ապրում, քան վերջին անասունը : Մեզ անվանում են «Ամերիկայի Միացյալ Նահանգների ազատ քաղաքացիներ», բայց ապա մի փորձեք ազատություն ուզել և ձեզ կը պատասխանեն կապարով և զնդակահարություններով, բանտով ու ձեծով : Մենք սենատորներ ենք ընտրում, նախագահ և այլն, մենք դատարան ունենք, վոր սլեք և պահպանի «որենքը և արդարությունը» : Իսկ իրոք զբանք անկամք տիկնիկներ են մեր բանկային և արդյունաբերական թաղափորների ձեռքում : Ռոկֆելլեր, Մորգան—ա՜հա ուլբեր են տնորինում Ամերիկայի բախար :

— Կապիտալիստները հիանալի հասկանում են իրենց շահերը

էյին բանվորների ընդհանուր թվի 70,86 %, իսկ արտադրության չափը—10,9 միլլիարդ գոլլար—կազմում էր ընդհանուր գումարի 73,7 % :

1905 թ. տրեստների ձեռքում կենտրոնացած էր .

Ամբողջ մանածագործական արդյունաբերություն . . . . .	50	%
Ապակյա իրերի արտադրություն . . . . .	54	»
Թղթի և տպագրական իրերի արտադրութ. . . . .	60	»
Մանրի մթերքների արտադրություն . . . . .	62	»
Սլկոնոլային խափչքների արտադրություն . . . . .	72	»
Մետաղագործական առարկաների արտադրության . . . . .	77	»
Յերկաթի և պողպատի արտադրություն . . . . .	84	»
Ինժնեական արդյունաբերության արտադրություն . . . . .	81	»

և կարողանում են միանալ: Դեռ 1903 թ. նրանք ստեղծեցին օնտո-  
սատերերի 2 մարտական միութիւն բանվոր դասակարգին խեղդե-  
լու հարուկ նպատակով: Առաջ «Քաղաքացիների արդշունարեա-  
կան ասոցիացիայի» և «Մանուֆակտուրիտների ազգային ասո-  
ցիացիայի» մասին է: Այդ յերկուսն իրենց տրամադրութեան տակ  
ունեն մեկ ու կես միլիոն դոլլար: Գործադուլի գեպըւմ նրանց  
ծառայում են զորքերը, շարեյկրեխներով լիքը գնացքները և  
12,000 պրովակատորների բանակը: Նրանց ոգնում է Պինկերտոնի-  
րնկերութիւնն իր գաղտնի խուզարկու պահնորդական բաժան-  
մունքի գործակալներով:

— Մեկ-մեկ բանվորները չեն կարող կովել օնտոսատերերի  
դեմ: Նրանք պետք է միանան, կապիտալի հզորութեանը պետք է  
հակադրել պրոլետարների զիտակցականութեանը և հզորութեանը:  
Ճիշտ է, մեզ մոտ այգպիտի միացումներ արդեն կան: Գրանք ար-  
հեստակցական միութիւններն են, վոր մտնում են «Աշխատանքի  
Ամերիկյան Ֆեդերացիայի» մեջ: Բայց ի՞նչ միութիւններ են  
դրանք: Նրանք միացնում են միայն բանվոր դասակարգի վո-  
րակյալ վերին շերտը: Նրանց սանձած քշում են կապիտալիսանե-  
րի լակեյները-Գոմպերտները և նրանց նման հրոսակները: Նրանք  
այնքան են հեռու հեղափոխական դասակարգային կովից, ինչքան  
յերկիրը յերկնքից:

— Իսկ ինչո՞ւ մենք, անվարժ բանվորներս, մինչև այժմ չկա-  
րողացանք կազմակերպել: Այն պատճառով, վոր Միացյալ Նա-  
հանգների արդշունարեութիւնը բալականաչափ զարգացած չեր:  
Մեքենաների հետ դժգար և գործ ունենալ, գործարանում խոշոր  
գեր էյին խաղում միայն վորակյալ, մասնագետ բանվորները, վո-  
րոնք գիտեն մեքենայի աշխատանքին ուղութիւն տալ և լրացնել  
այն իրենց սեփական ճարտիկութեամբ և ունակութեամբ: Բուր-  
ժուազիան չափազանց թանկ էր գնահատում նրանց և այդ պատճա-  
ռով ահամա նրանց վորտչ գիջումներ պետք է աներ, մասնավորա-  
պես թուլլատերեր, վոր նրանք իրենց միութիւններն ստեղծեցին:  
Դրա հետ միասին նա մանր գիջումներով, աշխատավարձի հափե-  
լումով կաշառում էր այդ ամբողջ բանվորական վերին շերտին,  
նրանց վրան ու ձեռքը կտպում էր գեղին առաջնորդ-չինովիկներ-  
րի համաձայնողական քաղաքականութեամբ:

— Այժմ դրութիւնն այլ է: Ամերիկյան կապիտալիզմն իր  
տեխնիկան կատարելութեան չափ գարգացրեց և արտադրութեան

Թափով ամբողջ աշխարհից առաջ անցավ: Գործարանները սեղմվում են տրեսաների մեջ, տրեսաներն սկսում են իրար հետ ձուլվել, ընդ վորում արդեն միանում են նույնիսկ արտադրութայն գանազան շրջանները (ածուխի և յերկաթի արդյունահանությունը, հանքանյութի արդյունահանությունը և այլն): Այդ հարակցվում է նրանով, վոր զանազան արտադրությունների մեջ աշխատանքի պայմանները համասարեցվում են և նրանք սարքավորվում են մեքենաներով, վորոնք կառավարման ժամանակ ավելի կամ պակաս չափով միատեսակ հմտություն են պահանջում: Միևնույն վախահագործին (слесарь) ու մեխանիկին կարելի չէ հեշտությամբ ողտագործել և՛ հանքալայրի մեքենայական բաժանմունքում, և՛ յերկաթաշինարարական գործարանում, և՛ մասնատողործական ֆաբրիկայում: Հենց մեքենաներն այնքան են կատարելագործված, վոր մասնագետի պահանջ ունեն վոչ թե աշխատանքի, այլ միայն հսկողության համար, այսինքն հիմնական աշխատանքն այժմ կատարում են անվարժ կամ կիսավարժ բանվորները:

Մեր նշանակությունը, անվարժ բանվորների նշանակությունն այդ պատճառով շարունակ ավելի յե աճում, ապա ուրեմն աճում է նաև հնարավորությունը բուրժուազիային հաղթահարելու, նրան հարկադրելու, վոր մեզ հաշիվ առնի: Այդ էլ պետք է անի մեր «Աշխարհի Արդյունաբերական Բանվորները» միությունը:

— Ինչի՞ յենք ձգտում մենք: Մենք վոչ միայն ցանկանում ենք բանվորական որվա կրճատում, աշխատավարձի բարձրացում, հավաքական պայմանագրեր և այլն, այլև մեմք ամենից առաջ դեմ ենք կապիտալիստների հետ համաձայնողական քաղաքականության, մեմք կողմնակից ենք վողջ կապիտալիստական կարգը տապալելուն: Մենք հայտարարում ենք. «բանվոր դատակարգը և տրեստեսատերերի դատակարգը վոչ մի ընդհանուր բան չունեն: Նրանս միջև չի կարող հաշտություն լինել մինչև այն ժամանակ, քանի դեռ միլիոնավոր բանվորներ տատապում են քաղցից ու կարիքից, իսկ մի բուռն մարդիկ, վորոնք և կազմում են ձեռնարկունների զսասկարգը, ողտվում են կյանքի բոլոր բարիքներից: Այդ յերկու դատակարգերի մեջ կոխիլը կը շարունակվի մինչև այն ժամանակ, յերբ բանվորները թե՛ քաղաքականապես և թե՛ արհեստագյականորեն միանալով կը դրավեն արատադրության միջոցները (այսինքն՝ ֆաբրիկաներն ու գործարանները) և իրենց աշխատանքի արդյունքները կատանան իրենց տնտեսական կազմակերպության

միջոցով (այսինքն արձմիռությունների միջոցով), վոր կազմակերպչորեն վոչ մի քաղաքական կուսակցության հետ կապում չէ\*):

— Մենք մեր շարքերն ենք կանչում բոլոր բանվորներին, անկախ նրանց մասնագիտությունից և արհեստից: Մենք անհրաժեշտ ենք համարում ստեղծել հանքային արդյունաբերության բանվորների միասնական ամուր միություն, մետաղաշորճների միասնական արտադրական միություն և այլն: Մեր մասսան—անվարժ կամ վարժ և բազմակողմանի նախապատրաստված, բայց մասնագիտություն չունեցող բանվորներն են: Այդ պատճառով նրանք մեր միության մեջ չեն մտցնի վոչ համքարություն, վոչ ևլ մանր ներքին կոռիվ, վոր չի դադարում բոլոր դեղին միությունները ջլատելուց: Ընդհակառակը, նրանք ավելի սերտորեն կը համախոսվին կապիտալի դեմ մղվող մեծ կռիվ համար:

— Մենք ցանկանում ենք միացնել բոլոր ազգությունների բանվորներին—անգլիացուն, Ֆրանսիացուն, ռուսին, իտալացուն և այլն, վորովհետև կապիտալիստները միակերպ ճնշում են մեզ բոլորիս: Կապիտալիստները ճարպիկորեն բանվորների մեջ թշնամանք են ցանում: Նրանք ասում են անգլո—սաքսին, Ամերիկայի հին բնակչին. «Տես, ահա Յեյրոպայից ահազին խմբերով դուրս են աղքատ գաղթականները: Նրանք սոված են և գրոշներով կաշխատեն: Նրանք կը նվազեցնեն քո աշխատավարձը, կը բռնեն քո տեղը: Հալածիք նրանց»: Յեզ իրոք, ընկերներ՛ք, դուք դիտեք, վոր Գոմպերտի դեղին միություններն աշխատում են շքնդունել գաղթականներին, առանց այդ ևլ գաղթականը մեծ մասամբ ի վիճակի չէ միության մեջ մտնելու, բարձր անգամավճարը տալ: Նա անկազմակերպ է մնում և կապիտալիստը դրանից սպտվելով, նրա կաշին է քերթում, ապա քերթում է նաև մեր կաշին: Մեր անվարժ բանվորների մեջ այդպիսի գաղթականները մեծամասնու—

\* ) Իր խնդիրներն «Աշխ. Արդ. Բան.» սահմանեցին Ամերիկայի սոցիալիստական կուսակցության ուժեղ ազդեցության տակ, վոր ծաղեց 1900 թ. և հետագայում, նման պատճառների շնորհիվ, ավելի պակաս համաձայնողական չդարձավ, քան իր արևմտա—յեվրոպական եղբայրները:

Չակերտների մեջ և դրված «Ա. Ա. Բ.» կանոնադրությունից վերջրած ցիտառ: Նրա վերջին Ֆրայներում զգացվում է սինդիկալիզմի հոտը:

թյուն են կազմում : Բոլոր ազգերի բանվորներին մենք պետք է համախմբենք «Աշխատհի Արդյունաբերական Բանվորները» մարտահան միութեան մեջ և այն ժամանակ . . .

— Զգուշացե՛ք, — լսվեց մի ազագակ :

Գործարանի դարպասներից յերևում էր, թե ինչպես հետազոտությունների հետևից հանկարծ յերևացին և սկսեցին սրընթաց կերպով մոտենալ բազմաթիվ ձիավորներ, փոչու խիտ ամպ բարձրացնելով : Տրաքոցներ լսվեցին :

— Անիծվածնե՛ր :

— Պինկերտոնի հրոսակնե՛ր :

— Բուրժուական վարձկաննե՛ր :

Հոտորն ամբիտնից ցած թռավ : Ամբոխը յեղաններով, քարերով զինվելով դիմեց դեպի դարպասը : Բանվորներից մի քանիսու հանեցին «Սմիտները» (ատրճանակները) : Սկսվեց փոխադարձ զնդակաձգութեանը . . .

Մեր առաջ է Ամերիկայի բանվորական շարժման տիպիկ ստատրաններից մեկը, վորսեղ յուրաքանչյուր գործադուլ յուրատեսակ մի փոքրիկ քաղաքացիական պատերազմի յե փոխվում, իսկ գործաթողների վրա յե ընկնում պետական կապիտալիստական մեքենայի ամբողջ հզորութեանը, զորքերը նրանց զնդակահարում են, հատուկ զնացքներով շտրեյկըրեխերներ են բերվում, հատուկ դատական վարչումների ոգնութեամբ կոնֆրիկացիայի յեն յենթարկվում բանվորների միութեանների գործադուլին Փոնդերը և այլն :

«Աշխատհի Արդյունաբերական Բանվորները» սկսել է յին վրձնական հեղափոխական կոխի կապիտալիստների դեմ, սակայն Ամերիկայի բանվորական շարժման գորգացման պայմաններն այդ կովին չեն նպաստում : Նոր կազմակերպութեանը շուտով վարակվում է սինդիկալիզմով, ժխտում է քաղաքական կովի անհրաժեշտութեանը, մանավանդ վոր նրա մեծամտոնութեանն ստարյերկրացի բանվորներից և բատրակներից էր և ստանց այդ էլ բնորական խավունքներից զրկված : Այս բանին նպաստում է Ամերիկոյի սոցիալիստական կուսակցութեան ոտֆորմիզմը : 1913 թ. սոցիալիստական կուսակցութեանը հրաժարվում է սրաչապանեղ կույրադոյի անխահատների մարտական կազմակերպութեան անպիսի գործադուլը : Նա կուսակցութեանից հրում է մի քանի հազար զիտակից բանվորի և վերջնականապես խզում է կուսակցութեան և



«Աշխարհի Արդ . Բան .» կապը : Վոստիկանական հարածանքները «Ա . Ա . Բ .» խանդարում են համահափորեն կառուցել իրենց կազմակերպությունը : «Ա . Ա . Բ .» ամեն մի հարյուր մարդուն ընկնում է 65 այսպես կոչված «Թափառական», սեզոնային բանվոր , վորոնք աշխատանք վորոնելու համար շրջում են ամբողջ յերկիրը և մեծ զբոսվարությամբ են կազմակերպման յենթարկվում : Փոխանակ հին դեպին արհմիությունների ներսում աշխատելու և ձգտելու նրանց ներսից հեղափոխականացնել , «Աշխարհի Արդ . Բանվորները» պարզապես ջնկվում են այդ միություններից և այդպիսով կորչում են ազդեցությունը յայն բանվորական մասսաների վրա<sup>\*)</sup> :

**ՌՈՒՍՍՍԱՆ** Յեքե վարեւ հետամնաց գյուղատնտեսական յերկրում , կապիտալիզմի սրբնքաց անման կողմին , միաժամանակ պահպանվում է փեռդալական-վոստիկանական կարգը , «ասիական» միապետությունը , վորը նույնիսկ ժխտում է «դեմոկրատական» ազատությունների եժան խոստումները , վորը հրով ու սրով ջախջախում է ամեն մի գործազույ և ամեն մի բանվորական միություն և յեթե , դրա շնորհիվ , աճող հեղափոխական ալիքի դուրս և անցնում պրոլետարիատի սովուն բայց իկյան բաղաբական կուսակցությունը , սպա այդ պայմաններում արիմիություններն սկսում են համաձայնողական բնութքը կորցնել—տեղի յե ունեցում այսպես կոչված միությունների բայլչեիկացումը :

Այսպես յեզով Ռուսաստանում , վորտեղ բանվորական շարժման նոր վերելքը արդեն 1911-14 թ . թ . ցույց տվեց , վոր մասանե-

<sup>\*)</sup> Անհրաժեշտ է նշել , վոր «Ա . Ա . Բ .» մեջ հեղափոխական բանվորների մանելուն նպատում է նաև այն , վոր Ամերիկայի արեմուտքի հոգային ազատ տարածությունները վերջնականապես սպառվել էյին , վորտեղ առաջները դնում էյին գյուղատնտեսական բանվորները կամ դողթականներն ու լուրը դժգոհ ապստամբ տարբերը : Հենց այդ հանգամանքն է նպատում Ամերիկայի սոցիալիստական կուսակցության սկզբնական աճմանը :

1914 թվի Ամերիկայի արդյունաբերությունը վերջնականապես դերակշռեց գյուղատնտեսությունը : Ընդ վորում ամերիկան աշխարհի առաջին յերկիրն է ըստ արտադրողական ուժերի գարգացման հզորության : Այսպես որինակ .

ըի ճնշող մեծամասնութիւնը դնում և պրոլետարիատի ամանդար-  
 դի, կոմունիստական կուսակցութեան (այն ժամանակ Ռ. Մ. Դ.  
 Բ. Կ. (բ.) հետեից: 1917 թ. իմպերիալիստական պատերազմի  
 դասերից և կերենակիրականութեան մանր-բուրժուական մենչեիկ-  
 եսերյան կոմեդիայի անանկութեանից հետո, Ռուսաստանի արհ-  
 միութեանները պանծալի կերպով կոպում Ելին բայլչեիկյան դրո-  
 շակի տակ հոկտեմբերին մոտենալու համար, իսկ Հոկտեմբերյան  
 հեղափոխութեանից հետո պրոլետարական դիկտատուրայի ամե-  
 նահուսալի հենարանը դարձան:

Բայց այս բոլորի մասին մենք մանրամասն կը խոսենք 5-րդ  
 գլխում, վոր ամբողջովին նվիրված է Ռուսաստանի արհարժա-  
 նը:

1913 թ. արդյունա- հանված և,արտադրված, վերածշակված	Հ.-Ա. Մ. նա- հանգներում	Փերմանիա	Անգլիա	Ֆրանսիա
Ձուգուն (հազ. տոնն)	31,214	19,309	10,648	5,100
Ածուխ (միլ. տոնն)	516,0	277,0	292,1	40,9
Պողպատ (հազ.տոնն)	31,800	18,968	7,786	4,687
Բամբակ (հազ կիլ.)	5,786	1,580	3,825	987

1914 թ. Ամերիկան արդյունահանել է նավթի համաշխարհային  
 արդյունահանութեան 2/3:

Յերկաթուղային ցանցը 1913 թ. հասավ մինչև 413 հազար կի-  
 լոմետրի (հանդեպ Յեվրոպայի 346 հազարի), ընդ վորում նրա մոտ  
 95 տոկոսը պատկանում է 6 Ֆինանսական խմբակներին: 1909—13  
 թ. թ. արդյունահանված և պղնձի ամբողջ համաշխարհային  
 արդյունահանութեան 58,6 % : Ամերիկայի ամբողջ Ֆինանսական և  
 արդյունաբերական կյանքը կառավարում են 2 բանկ—Ռոկֆելլե-  
 րինը և Մորգանինը:

«Ա. Ա. Բ.» շարունակ հերոսական կռիվ են մղում Ամերիկայի  
 հզոր կապիտալի դեմ, վոր արտահայտվում է համառ, հաճախ ար-  
 յունահեղ դործադուլներով: Հատկապես մեծ արևութիւն յերևան  
 բերին «Ա. Ա. Բ.», պատերազմի և հետ պատերազմական շրջանի ի-  
 ռենց կռիվներում (1914—1919 թ. թ.): Սակայն ամերիկյան ռեակ-  
 ցիայի ճնշումը, ինչպես և վերեր թված բոլոր պատճառներն ա-  
 վելի ուժեղ յեղան: Յեթե 1919 թ. Ամերիկայի բանվորական շարժ-  
 ման վերելքի հետ միասին «Ա. Ա. Բ.» հաջողվեց իրենց շուրջը հա-

**ՎԵՐԵԼԻՔՆԵՐ ԱՆ-** Անգլիական իմպերիալիզմը, Յեվրոպայի  
**ԻՒՐԱՅԻ ԺՈՂՈՎՐԲ-** և Ամերիկայի ժյուս յերկրների իմպերիալիզ-  
**ԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒ-** մի հետ համահավասար կերպով, 19-րդ դա-  
**ԹՅԱՆ ՅԵՎ ԱՐՀ-** րի վերջին և 20-րդ դարի սկզբին անչեղորեն  
**ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ:** զարգանում էր: Անգլիայի արհեստակցական  
 շարժումը, ընդհանուր առմամբ ու ամբող-  
 ջությամբ, իր համաձայնողական ու Ֆորմիտական բնույթը պա-  
 հում էր: Մական կապիտալիզմի աճման պայմանները բոլոր յերկր-  
 ներում միատեսակ բարեհաջող չեն: Ագլիան յերկար տասնամյակ-  
 ների ընթացքում ամենահզոր զարգացած ժողովրդական տնտեսու-  
 թյունն ուներ (հատկապես արդյունաբերությունը): 19-րդ դարի  
 վերջին քառորդում Անգլիայի ժողովրդական տնտեսաբան ընդ-  
 հանուր վերելքը չնայած դեռ շարունակվում է, բայց, ուրիշ յեր-  
 կրների հետ համեմատած, արդեն սկսել էր հարաբերաբար կր-  
 հատվել: Կապիտալիստական յերկրների համաչխարհային առաջ-  
 նության մրցության մեջ Անգլիան սկսեց հետ մնալ: Դրա շնորհիվ  
 Անգլիայում բանվոր դասակարգի դրուքյան վատացումը և համա-  
 պատասխան վերելքներն անգլիական բանվորական շարժման մեջ  
 անխուսափելի էին: Դասակարգային կռիվը մասնակի սրվեց և  
 հուլյնիսկ ամենայնրդվյալ համաձայնողական միությունները վո-  
 բոշ չափով սկսում են ձայնակալ և «կարմրել»:

Այժմ մանրամասն քննենք, թե ի՞նչ դրուժյան մեջ էր անգլիա-  
 կան արհեստակցական շարժումն 80-ական թվականներին:

Արդեն 70-ական թվականներից Անգլիան, այդ «Ամբողջ աշ-  
 խարհի արհեստանոցը» ստիպված էր առանց կատակի ընդհարվել  
 նոր և դրա հետ միասին խիստ ուժեղ մրցակիցներին—Ֆերմանիայի  
 և Միացյալ Նահանգների հետ: Նրանց մեջ ծագած դուռեմարտը  
 վերջանում է ի մնաս Անգլիայի, վորովհետև նրա համեմատաբար  
 նվազ հանքային հարստություններն սկսել են սպառվել: Յերկաթի  
 հանքանյութի արդյունահանությունը յերկրի ներսում ստույգման

մախմբել 900,000 անգամ, ապա արդեն 1922 թ. անգամների թիվը  
 պակասելով հասնում է 50,000 (!) մարդու: Միևնույն ժամանակ  
 սինդիկալիստական թերութներն այնտեղ են հասցնում, վոր «Աշ-  
 խարհի Արդյունաբերական Բանվորները» կորցնում են իրենց հե-  
 զափոխականությունը և խզում կապը Կոմիտեների հետ (միության  
 14-րդ կոնգրեսում 1922 թ. Չիկագոյում):

կետի վրա յե կանգնած, ստիպված ներմուծում էլին այլ հանքանյութեր (նրա ներմուծումը 1880-1907 թ. թ. շրջանում 3 անգամ մեծացավ—2,663 հազար տոննից հասավ մինչև 7,642 հազար տոննի) : «Աժուխի քաղափոր» Անգլիան արագորեմի հետ է մղվում յերկրորդ տեղը, Ամերիկայից հետո : Յերկրագնդի վրա արդյունահանվող ամեն մի հարյուր փութ անուխից Անգլիայի բաժինն էր 1870 թ. 52,8 փ. , 1885 թ.—40 փութ : Ամբողջ աշխարհում արդյունահանվող ամեն մի 100 փութ չուգունից, Անգլիայում արդյունահանված է 1890 թ.—29,2 փութ, 1890 թ.—21,7 փութ, 1910 թ.—15,4 փութ, իսկ 1912 թ. ընդամենը միայն 12,6 փութ : Դրա փոխարեն Գերմանիայի բաժինը չուգունի արդյունահանութեյան մեջ 1890—1912 թ. թ. շրջանում հասել է՝ 16,8 փթից մինչև 24,9 փթի, իսկ Ամերիկայի բաժինը—34 փթից մինչև 41 փթի : Անհուսալիորեն հետ է մնացել Անգլիան նաև պողպատի հարման մեջ : Վերջապես Գերմանիան հաջող կերպով դուրս է քշում Անգլիային նրա ամեն սկզբնոր յեկրոպական ու արտաշեկրոպական առևտրային շուկաներից : Այս բոլոր յերեկուցիքները հասկապես ուժեղանում են 1914 թվի պատերազմից 4-5 տարի առաջ<sup>o</sup> :

<sup>o</sup>) Անհետաքրքիր շեն հետևյալ համեմատական աղյուսակները :

	Պողպատի հարուստը (հազ. մետր տոններով)		Համաշխարհային առևտրի մասնակցութեյան բաժինը	
	1892 թ.	1913 թ.	1886-88 թ.	1909-11 թ.
Անգլիա . . . . .	2,920	7,668	19,8%	16,6%
Մ.-Նահանգներ . . . . .	4,300(1890թ)	31,440	8,7%	9,3%
Գերմանիա . . . . .	2,756	19,596	10,6%	11,9%

	Աժուխի արդյունահանութեյունը(հազ. մետր. տոններով)			Չուգունի արտադրութեյունը (մետր. տոններով)		
	1885 թ.	1907 թ.	1913 թ.	1870թ.	1907 թ.	1913 թ.
Անգլիա . . . . .	161,901	272,100	292,100	6,057	10,277	10,260
Գերմանիա . . . . .	73,676	205,700	279,200	1,391	12,875	18,096
Մ.-Նահանգներ . . . . .	97,366	465,800	512,350	1,693	26,192	30,972

Եվագոյ գերմանացիները չնորհիվ անգլիական բարձրագույն ի վիճակի չեն առաջվա նման լավ վարձատրել իր բանվորներին—իրական աշխատավարձ ընկնում է<sup>o</sup>) :

Այդ ժամանակներն Անգլիայում կապիտալիզմն իր ներքին կուռցվածքով էլ զարգացման բարձր աստիճանի հասավ :

Այստեղ ճիշտ նույն կերպ, ինչպես վոր Ամերիկայում, փոքրաթիվ բարձր վորակյալ բանվորները ղեկավարութեամբ կարող էր աշխատել անվարժ կամ միջակ-վարժութեամբ բանվորները մի մասնա, վորոնք այժմ արտադրութեան մեջ հիմնական դեր են սկսում խաղալ : Շատ ավելի վատ դրութեան մեջ զանվելով, քան բանվոր դասակարգի վերին շերտը, այդ անվարժ բանվորներն ավելի կրտուկ կերպով են զգում իրենց և ձեռնարկունների շահերի հակադրութեանը և ավելի հեշտութեամբ են սոցիալիստական ազդեցութեան յենթարկվում : Իսկ սկզբում նրանց մեջ սոցիալիստական պրոպագանդա չէ վարում սոցիալ-դեմոկրատական Ֆեդերացիան (վոր կազմվեց 1883 թ.), իսկ հետո «Անկախ բանվորական կուսակ-

Վերջագետ, վորպեսզի բնութագրենք, թե ինչպես Գերմանիան Անգլիային դուրս է քշում առևտրական շուկաներից, նշենք, վոր 1892 թ. անգլիական արտահանութեանը յեվրոպական յերկրները (բացի Գերմանիայից) կազմում էր գերմանականի 70.7 տոկոս (առանց նրա արտահանութեան Անգլիա), իսկ 1910 թ.՝ ընդամենը միայն 47.7 տոկոս : Ինչ վերաբերում է արտալեվրոպական շուկաներին, ապա, որինակ, Հարավային Ամերիկայի արտաքին առևտրի մեջ Գերմանիայի ներմուծման բաժինը 1909-12 թ. թ. չըջանում 16.6 տոկոսից աճեց մինչև 18.6 տոկոսի, իսկ անգլիականի բաժինը նվազեց 30.7 տոկոսից մինչև 28.4 տոկոս :

<sup>o</sup>) Յեթև 1900 թ. աշխատավարձի մակարդակը հարյուր բնագունենք, ապա 1919 թ. նա կը լինի 106.5, մինչդեռ մանրածախ գներն Անգլիայում նույն այդ չըջանում բարձրացան 100-ից մինչև 116.5 : Ժողովրդական տնտեսութեան գլխավորագույն ճյուղերում (չինտարարական, արդյունաբերական, հանքային, մեքենաշինարարական և հողագործութեան մեջ) աշխատավարձը 1900-1901 թ. թ. չըջանում շատացավ միայն 0.31 %, մինչդեռ կենտական մթերքներին մեծածախ գները աճեցին 11½ % :

պայմաններում, հին «արխատեղրատ» բանվորական միությունները շարունակ ավելի յեն թուլանում : 1897 թ. «Մեխանիկների Ամալգամալ ընկերությունը», պոռլետարիատի բարձր-վորակյալ կազմերի հզոր կազմակերպությունը, վոր վեց միլիոն ուսուրուջ ավելի գործադուլային Փոնդ եր կուտակել, ձեռնարկունների դեմ գործադուլի յե դուրս գալիս և լիովին ջախջախվում և : Այդ տարին իրավամբ կարելի յե «հին տրեդ-յունիոնիզմի» մայրամուտի տարի հաշվել : Ընդհակառակն, անվարժ բանվորների լայն մասսաներին հանդիման և կապիտալիզմին մի շարք հարվածներ հասցնել, շահել խոչորագույն գործադուլները և իրենց ուժեղ արհեստակցական միություններն ստեղծել :

Այդպիսի հաջող գործադուլներից առաջինը դեկտեմբերի 1889 թ-վի հոյակապ գործադուլն էր : Շուտով գրանից հետո արագորեն կազմակերպվեցին դեկտեմբերի և հասարակ բանվորների միությունները (վոր հիմնվեցին սոցիալիստ եներնաի և Մենի ձեռքով), ստեղծվեց «Բանվորների Գլխավոր միությունը», վոր միացնում էր զանազան արտադրությունների անվորակյալ բանվորներին : Հատկապես սրբնթաց և անուժ հանքավորների շարժումը (1888 թ. հիմնվելով, հանքավորների Ֆեդերացիան սկզբում միայն 36,000 անդամ ուներ, 1889 թ. — 96,000, իսկ 1893 թ. — 200,000 ավելի) : Անգլիական արհշարժումն աստիճանաբար սկսում է շարունակ ավելի հավաքել իր ցրիվ յեկամ ուժերը : Ասենք, վորեւ մանածագործական գործարանում գուցե բանվորների մի քանի միություններ կան բառ արհեստների (ջուլհակների, մեքենավարների, մանողների, ներկողների և այլն), բայց այդ բոլոր տեղական միությունների շրջանային կոմիտեն մեկ և, կենտրոնական կոմիտեն նույնպես մեկ և, այսինքն համաբարային միություններն իրենց վերին մասում միանալով կազմում են արտադրական ֆեդերացիա<sup>\*)</sup> :

Ընդ սմին յեթև 1914 թ. անգլիական 3,954,000 բանվոր դեռ բաժանված էին բառ 1,129 տրեդ-յունիոնի, ապա միևնույն ժամանակ այդ միություններից 75 արդեն միացնում էին 3,430,744 մարդու, այսինքն 86 տուրս, արհեստակցականորեն կազմակերպված պրոլետարիատի մեծող մասային : Հանքավորների և յերկաթուղայինների 1911—1912 թ. թ. հոյակապ գործադուլային շարժումից հետո, վորին մասնակցում էին ավելի քան 1,200,000

<sup>\*)</sup> Մանրամասն տես հետևյալ գլուխը «Կադմակերպչական հարցն արհշարժման մեջ» :

մարդ, նույնիսկ կազմվում է (1914 թ. ապրիլին) յերեք Ֆեդերացիաների («Յերեքակ համաձայնութուն») հզոր մարտական միութունը, վորի կազմի մեջ մտնում են Մեծ Բրիտանիայի լեռնային բանվորների ֆեդերացիան (1,800,000 մարդ), յերկաթուղայինների ազգային միութունը (270,000 մարդ) և փոխադրութան բանվորները (դոկերները, առևտրական տորմիցի նավաստիները, հնոցապանները (ковчар) միութունները, վորոնք միացած կազմում էին փոխադրութան դործավորների ֆեդերացիա: Այդ միութունը կարող եր ահապին դեր խաղալ անգլիական բուրժուազիայի դեմ կռվելիս: Գործադուլ հայտարարելով, նա կարող կլիներ կանդեցնել յերկրի ամբողջ արդյունաբերական կյանքը, դադարեցնել վառելիքի արդյունահանութունը և բերելը, հարկադրել Անգլիային սովի յենթարկվել, ծովով բերվող ուտելիքները պահելով (վորովհետև Անգլիան, ուր հողագործութունը քիչ է դարգացած, յերեք քառորդով սնվում է բերած մթերքներով):

Անգլիական արհմիութունների համազումարում շարունակ ավելի հանալի են սկսում հնչել բուրժուազիայի դեմ կռվելու կոչերը, սկսվում են նշվել ձգտումներ, վորոնք վուչ միայն նպատակ ունեն բանվորների դրութունը լավացնել դոյութուն ունեցող կապիտալիստական կարգի շրջանակներում, այլև լայն քաղաքական դործունեութան անցնել և վերջնական հաշվով կապիտալիզմը վոչնչացնել: Այսպես, որինակ, արեդ-յունիոնների Նորվիչի (1894 թ.) և Բիրմինգհանի (1897 թ.) կոնգրեսները վորոշում ընդունեցին հողի, հանքերի, յերկաթուղու ազգայնացման մասին, իսկ Լոնդոնի կոնգրեսը (1901 թ.) 1,700,000 բանվորի ձայներով բողոքի բանաձև ընդունեց անդր-բուրժուական պատերազմի դեմ և վորոշեց ամբապնդել ինքնուրույն բանվորական կուսակցութունը: Լայն դործադուլային ալիքի ճնշման տակ անգլիական կառավարութունն ինքն ստիպված յեղավ 1912—1913 թ. թ. շրջանում լրջորեն զբաղվելու այնպիսի հարցերով, ինչպիսիք են հողի աստիճանաբար ազգայնացումը, ապրուստի նվազագույն չափի սահմանումը բոլոր արտադրութունների բանվորների համար (ընդ վորում այդ նվազագույն չափն ամխահատները համար մուցվեց 1912 թ.), հանքերի, յերկաթուղիների ազգայնացումը և այլն: Հետևանքն այն յեղավ, վոր անգլիական «Անկախ բանվորական կուսակցութան» առաջնորդ Թոմաս Մանի բառերով. առած «1914 թ. հուլիսին մենք (այսինքն Անգլիան) այնքան մոտիկ էյինք արդյունաբերական հեղափոխու-

Քրոմաս Մանի բառերով ասած «1914 թ. հունիսին մենք (այսինքն Անդլիան) այնքան մտախի ելինք արդյունաբերական հեղափոխությանը, ինչքան զեռ յերբեք չի յեղել մեր յերկրի պատմության մեջ»: Սակայն անդլիական բուրժուազիան զեռ իսկական հեղափոխությունից վախենալու պետք չունեք, անգլիական կապիտալիզմը հաղաշիարհային շուկայում իր մի շարք նվաճումները Գերմանիային ու Մ. Նախագեներին զիջելով, միևնույն ժամանակ զեռ բավականաչափ ամուր երևի քարմ նյութերով: Անգլիական բանվոր դասակարգին զեռ չհաջողվեց բուրժուազիայի դեմ վարած լայն և ծանր դատակարգային կռիվներում, ինչպես հարկն է, կռել իր ուժերը: Արհեստակցական շարժման զեղին վերին շերտը սահմանափակվեց միայն հին առաջնորդներին նորերով փոխարինելով և յևսանդակին քաշեց անգլիական միությունները համաձայնողականության ճահճի մեջ: Անգլիական արհարժման ղեկավար կենտրոնը զեռ չեր ստեղծված և 1,124 միություններն առաջիկա նման ամեն մեկն իր կողմն էր ձիգ տալիս: Անգլիական սոցիալիստներն էլ զեռ «Անկախ բանվորական կուսակցության» իրոք պատրաստվում են կապիտալիզմի դեմ կռվելու, բայց կասկածելի ճանապարհով... «Հասարակությանը սոցիալիզմի սկզբունքներով դաստիարակելով»: Իսկ մասսայական քաղաքական «Բանվորական կուսակցությունը» (1906 թ. ստեղծված և արեղ-յունիստներին ձեռքով) անձև է, նույնիսկ իր կազմակերպչական սպարատը չունի: Նա վորոչ զործունեյություն է յերևան բերում միայն ընտրական կամպանիաներում, դրա համար չըջաններում ստեղծելով իր կամիտները: Իսկ մնացած ժամանակ, (մինչև 1914 թ.) նա համարյա զոյություն չունի և ողտվում է իր մեջ մտնող կազմակերպություններից ամենահզոր արեղ-յունիստներին սպարատից: Բայց արեղ-յունիստներն զեղին վերին շերտն իր կնիքն է դնում «Բանվորական կուսակցության» ամբողջ զործունեյության վրա, վոր չափազանց քիչ հեղափոխական է և չնայած իր ամբողջ «ինքնուրույնությանը», շարունակում է պարլամենտում առաջիկա պես անողնական կերպով որորվել յերկու բուրժուական կուսակցությունների—լիբերալների և պահպանողականների միջև:

ԻՄՊԵՐԻԱԼԻՉՄԻ ԱԶ-

ԴԵՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՀ-

ՇԱՐԺՄԱՆ ՎՐԱ

ՅԵԶՐԱԿՆՈՒԹՅՈՒՆ-

Իսկ վորո՞նք են մեր վերեն ասածների

հիմնական յեղրակացությունները: Ի՞նչ

պերիալիզմի չըջանում արհեստակցական

շարժման գորդացման րնթացքն ակնառու



ՆԵՐ՝

և վառ սրինակ է, վար մեր ավելի առաջ  
(տես «Ներածութիւն») մատնանշած ար-

հետազոտական շարժման որենքները ճիշտ են, վար արհեստակցա-  
կան շարժումը սերտորեն կապված է յերկրի ժողովրդական տըն-  
տեսութեան կացութիւնից, պրոլետարիատի ընդհանուր դասա-  
կարգային և քաղաքական կռիւ պայմաններից և զարգացումից :

Իրոք ինպէրիալիզմը կապիտալիզմի զարգացման բարձր առ-  
ախճանն է նշանակում, ամեն մի յերկրում աճել են ու ամբացել  
հզոր արևտաներն ու սինդիկատները, վտրոնք միացած են բանկերի  
միջոցով : Արդյունաբերութեան հսկայական աճումն ստեղծում է  
պրոլետարիատի միլիոնավոր կազմեր : Դաժան Փարրիկա-զորմա-  
րանային գալրոցով պրոլետարիատն այն զիտակցութեան է դալիս,  
վար անհրաժեշտ է շարունակ ավելի մեծ կազմակերպութիւն և  
միացում կապիտալիստների ղեմ կռվելու համար : Արագորեն ա-  
ճում են սոցիալիստական կուսակցութիւնները, ինչպէս և արհես-  
տակցական միութիւնները շարքերը : ԹՎում էր, վար բանվորա-  
կան, նրա հետ նոս արհեստակցական շարժումը պետք է զարգա-  
նան, շարունակ ավելի հեղափոխական դառնան, մեծացնեն գառա-  
կարգային կռիւ թափը, կտրուկ ու անհաշտ կերպով հակադրելով  
բանվորների շահերը կապիտալի շահերին : 1889 թ. վերածնվեց  
նոս բանվորական շարժման քաղաքական կենտրոնը—2-րդ Ին-  
տերնացիոնալը, 19-րդ դարի վերջին դանադան յերկրների մի շարք  
արհեստակցական միութիւններ իրար հետ կապ հաստատեցին,  
1902 թ. նույնիսկ ծագեց արհարժման միջազգային կենտրոնը—  
Արհամիութիւնների միջազգային քարտուղարութիւնը : Մի խոս-  
քով իրրև հակակշիտ կապիտալիզմի աճմանը, վար համաշխարհա-  
յին թափ ստացավ, կարծեք թէ ձեափորում էլին միջազգային  
բանվոր գառակարգի ուժերը : Սակայն բանվոր դասակարգը վաչ  
միայն վնասական կռիվների չը բռնվեց կապիտալի հետ, այլ հա-  
մարյա ամենուրեք (բացառուրյամք, մասամք, Ռուսաստանի  
արիմիուրյունների, նույնպէս և Ամերիկայի «Ա. Ա. Բ.») 19-րդ  
դարի վերջին և 20-րդ դարի սկզբին համաձայնողական մեծշէիկ-  
յան ճանապարհով զնաց : Նրա անցյալ հեղափոխական բնույթից  
այնպիսի յերկրներում, ինչպիսին, որինակ, Գերմանիան և Զը-  
րանսիան են, հեղահետ հետք էլ չմնաց :

Ինչո՞ւմն է բանը : Մրա յուժումը հենց այն է, վար արհեստակ-  
ցական շարժումը (ինչպէս և մարդկային հասարակութիւնը) վոչ

Իսկ ի՞նչ հակասութիւններ ստեղծեց իմպերիալիզմը բանվորական և արհեստակցական շարժման մեջ:

Ճիշտ է, կապիտալիզմն առաջվա պես ծծում էր բանվորներին հյուսիսէրը հավելյալ արժեքի ձեռով. ճիշտ է, իմպերիալիստական հսկաները—Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան և Ամերիկան—բար հետ դժման գոտեմարտի ելին բռնակի գաղութների, չուկաների, յերկրագնդի բաժանման համար և դրանից ընդհանուր սոցիալական բանվոր դասակարգը սոցիալում էր: Բայց այդ բոլորի կողմին, ինչպես մենք տեսանք, իմպերիալիստները ճարպիկորէն իրենց մութ գործերի մեջ ելին քաշում բանվոր մասսայի առանձին շերտերը: Այն հյուսիսի մի մասը, վոր քաղում էր բուրժուազիան առուկներից, գերվաստակների մի մասը, նա բարձր աշխատավարձի ձեռով բաժին էր հանում իրեն ամենապետական, այսինքն վորակյալ բանվորներին և դրանով նրանց շահագրգռում էր իր կողմուտիչ քաղաքականութեամբ: Բուրժուազիան հենց բանվոր դասակարգի մեջ ստեղծում էր ավելի կամ պակաս չափով սոցիալական վերին շերտ, այսպես կոչված բանվորական արխատութեամբ, վորը նշանավոր չափով ավելի լավ էր սպրում, քան անվարժ բանվորների լոյն մասսան: Բնական և, վոր այդպիսի վերին շերտը (իսկ նրա կազմի մեջ պատահաբար չէր, վոր մասնում էլին արդյունաբերութեան կարեւորագույն ճյուղերի բանվորները—էլեքտրո—տեխնիկները, տեխնիկները, մետաղագործները, յերկաթուղայինների մի մասը և այլն) քիչ էր ընդունակ ակտիվ կռիւ մղելու բուրժուազիայի դեմ, ընդհակառակը, բանվորների այդ մասը սկսում էր իր հայրենի բուրժուազիայի համաշխարհային չուկայում տարած ամեն մի հողթմանակը դիտել իրեն իր հարազատ, մոտիկ գործը: Չէ՞ վոր ամեն մի գաղութային կողմուտով հայրենի կապիտալիզմն ամբանում էր և բանվորական «արխատութեամբ» գրութիւնը լավանում:

Մենք վերեւը ցույցը ավելցինք, վոր առաջին անգամ հենց սոցիալական բանվորներն արհմիութիւնների կազմակերպեցին, հենց նրանք էլին, վոր շարունակ սոն էլին տալիս արհեստակցական շարժմանը: Ճիշտ է 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին տեխնիկայի զարգացման հետ միասին, սկսում է արտադրութեան մեջ շարունակ ավելի աճել անվարժ կամ կիսավարժ, բայց բազմա-

կողմանի նախապատրաստված բանվորների դերը: Սակայն այդ բանվորների մի մասն էլ համեմատաբար նպաստավոր պայմաններում էր ապրում շնորհիվ ընդհանուր արդյունաբերական վերելքին: Իսկ բանվորների մնացած մասի դեմ, վոր ամենից շատ էր շահագործվում և այդ պատճառով հաճախ զժողոճում էր, ապրատամբում, բուրժուազիան ուղղում էր կապիտալիստական պետական մեքենայի ամբողջ հզորութունը, իր վստօրիկանական բոլոր փշերն ու կարիճները:

Այնուամենայնիվ, չեթե բուրժուազիան դործեր միայն բըունութան միջոցներով, ի հարկե նրան չէր հաջողվի բանվորական շարժումը բավականաչափ սեղմել մամուլի տակ: Առանձին կարիք էլ չկար այդ անելու.—կապիտալիստներին պատրաստակամութեամբ ծառայում էլին իմպերիալիզմից կաշառված և փշացրած, իմպերիալիզմի հավատարիմ լակեյները—արհմիութեանների գեղին առաջնորդները, արխատուհրատիան, նույնպես և բոլոր յերկրների անկաշուն, արտոք քայքայվող մենչևիկյան քաղաքական կուսակցութեանները, 2-րդ Ինտերնացիոնալի կուսակցութեանները:

Մենք արդեն վերերը ցույց տվեցինք, ինչպես այդ բոլորը միասին առած ստեղծում էր մի հսկայական վոստայն, վոր խճճում էր բանվորական շարժումը, արյունաքամ էր անում արհմիութեանները, վորսնք մինչև այդ լի էլին հեղափոխական հյութերով: Սակայն այդ վոստայնի առանձին թերերը միանգամից չեն հյուսվել: Չափազանց լայն նյութ և տալիս Գերմանիան, վոր ողնում և մեկ հեռուելու իմպերիալիզմի սպիեցութեանը բանվորական և արհեստակցական շարժման վրա: Գերմանական արհշարժման մեջ, համապատասխան գերմանական կոպիտալիզմի ծագվմանը, մենք 90-ական թվականներին նկատում ենք աշխարհ անցումն, թո՛րչէ համաձայնողականութեան կողմը, վոր հեռույլ 25 տարվա մեջ անչեղ կերպով խորանում և դարգանում է: Ի հարկե իմպերիալիզմը բոլոր յերկրներում բոլորովին միատեսակ չէր դարգանում: Այսպես, սրինակ, Աեգլիայում (այն պատճառների շնորհիվ, վորսնց մասին մենք վերին իր տեղում խոսել ենք) ժողովրդական անասութեան յորահատուկ պայմանները, հենց 80-ական թվականների վերջի և 1914 թ. միջև ընկած շրջանում, վորոչ չափով սրեցին անգլիական բանվորների դասակարգային կռիվը: Այնուամենայնիվ այդ սրումը չափազանց անբավարար էր և, ընդհանրա-

պես և ամբողջութեամբ առած, անդլիական արհմիութեանները դեղին մնացին: Ճիշտ է, անդլիական արհմիութեանները նույնիսկ կազմեցին ինքնուրույն քաղաքական կուսակցութեան, բայց այդ կուսակցութեանն էլ զուտ սեֆորմիստական դուրս յեկավ: Առաջվա պես արհմիութեանները շինովնիկները և համաձայնողականները յեռանդով ներշնչուած էյին բանվորներին, վոր նրանք իրենց սպասութեանը պիտի ձեռք բերեն միայն բուրժուական պարլամենտները պատգամավորական տեղերը համար կովելով, միայն հալաքական պայմանագրերով մի ավելորդ կողակ դուրս կորուցելով և այլն: Ֆրանսիան, նույնպես իր ժողովրդական տնտեսութեան զարգացման հատուկ պայմանները չնորհիվ, 20-րդ դարի վերջին չէր կարողանում հասնել համաշխարհային կապիտալիզմի ընդհանուր կատարի տեմպին: Այդ շրջանում ծագեց և զարգացավ մեր վերեր նկարագրած Փրանսիական անարխոստիզիկալիզմն իր հատուկ, վաչ տոկոն հեղափոխականութեամբ: Սակայն 20-րդ դարի սկզբին Փրանսիական արհմիութեաններն էլ ամբողջովին գլորվեցին սեֆորմիզմի գիրկը: Ամերիկայի ժողովրդական անտեսութեան զարգացումը, ինչպես և ամերիկյան բանվորները ընդհանուր դասակարգային յուրահատկութեանը ստաջ բերեց մի բունկում—«Աշխարհի արդյունաբերական բանվորները» շարժումը, վորը սակայն մեծ թափ չստացավ: Ռուսաստանում կապիտալիզմի բուն զարգացման բոլորովին հատուկ բնույթը հետամնայ գյուղատնտեսական յերկրում, ինքնակալութեան պայմաններում, պրոլետարիատի հեղափոխական քաղաքական կուսակցութեան—բայլէիկները ներկայութեան ժամանակ, կարուկ կերպով մի կողմ թեքեց իմպերիալիզմի փչացնող ազդեցութեանը: Սակայն այդ բոլոր թեքումները և առանձնահատկութեանները չեյին կարող փոխել համաշխարհային տնտեսութեան զարգացման հիմնական ընդհանուր ընթացքը: 1914 թ., համաշխարհային պատերազմի մտնեցնին հալաքական իմպերիալիզմը, համարյա բոլոր յերկրներում, համաձայնողականների ձեռքերով կարողացավ աւուր կերպով տանձել բանվորական և արհեստակցական շարժումը:

Ճիշտ է, այդ հալթութեանը ժամանակավոր եր: Իմպերիալիզմը չկարողացավ կապիտալիստական կարգի բոլոր ներքին հակասութեանները հալթահարել: 1914 թ. բունկվեց դաժան համաշխարհային իմպերիալիստական օպանգը, վոր մի կողմից միլիտարիզմը բանվորները և գյուղացիները զրկեց կյանքից, վորանք

վոչնչացան հանուն բուրժուազիայի շահի, իսկ մյուս կողմից ծանր հարված հասցրեց համաշխարհային ամբողջ կապիտալիստական տնտեսութեանը: Պատերազմից հետո կապիտալիզմն արդեն այդ հարվածից չի կարող ուշքի գալ: 1919—1921 թ. թ. կապիտալիզմն ունեցավ ամենազաւթան արդյունաբերական կրիզիս: Միաժամանակ վրդովմունքը աճում է լայն բանվոր մասսաների մեջ, վորոնք յերկար ժամանակ խարվում էին, բայց վորոնց աչքերը պատե-  
րազմի ընթացքում բացվել է:—Բարձրանում է հեղափոխական շարժման ալիքը: Արդեն 1917 թ. հոկտեմբերին, պատերազմող յերկրներից մեկում, Ռուսաստանում, այդ ալիքին հաջողվում է ավելել կապիտալիստական կարգը: Իսկ Արեւուտքի մնացած յերկրներում պրոլետարիատը յերիտասարգ հերոսական կոմմու-  
նիստական կուսակցութեանն էրի ղեկավարութեամբ հետպատե-  
րազմյան շրջանում կատաղի կռիվ է մղում կապիտալի դեմ: Սո-  
ցիալ—համաձայնողականները, արձմիրութեանները ղեղին վերին շերտը մինչև վերջ իրեն հավատարիմ են մնում—նրանք ամեն ջանք  
թափում են, վորպեսզի ջախջախեն բանվորական շարժումը, խան-  
դարեն ապստամբութեանները, դործադուլները և այլն: Այդ մա-  
սամբ նրանց հաջողվում է: Բայց միայն մասամբ: Հեղափոխական կռի-  
վի հնոցում արհեստակցական շարժումն արագ ձախտում է:  
Համաշխարհային կապիտալիզմի սկսվող քայքայումը և դրան  
հետևող միջազգային բանվորական շարժման կտրուկ թեքումները  
դեպի ձախ, արհարժամանն էլ կտրուկ կերպով հեղափոխական վե-  
րելքներ է յեն մղում:

Բայց այդ մասին ավելի մանրամասն հետևյալ գլուխներում:

### ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Վո՞ր կազմակերպութեանները պետք է հաշվել արհարժ-  
ման հսկահան սողմեր և ինչու՞:
2. Ի՞նչ կապ կա գործադուլային շարժման և առաջին արհ-  
միրութեանների յերեան դալու միջև:
3. Ի՞նչ առաջադիմութեաններ արեց գերմանական կապիտա-  
լիզմը 19—րդ դարի վերջին և ի՞նչպես արտահայտվեց այդ Գեր-  
մանիայի բանվոր դասակարգի դրութեան վրա:
4. Ինչո՞ւ գերմանական իմպերիալիզմի աճման հետ միա-  
տին, սոցիալ—դեմոկրատիան և գերմանական արհմիրութեանները,  
համաձայնողական դարձան:

5. Ի՞նչպէս եյին վերաբերվում գերմանական արձմիրաթյունները մայիսի 1-ի տոնակատարութեանը և ընդհանուր դործազուրիին :

6. 20-րդ դարի սկզբին Փրանսիական ժողովրդական տնտեսութեան զարգացման ի՞նչ հիմնական մոմենտներ նպաստեցին անարխո-սինդիկալիզմի ու Ֆորմիստական վերասերմանը :

7. Ինչո՞ւ 20-րդ դարի սկզբին Ամերիկան սկսեց համարվել ամենահզոր և բարձր—զարգացած կապիտալիզմի յերկիր :

8. Ի՞նչ պատճառներ նպաստեցին, վոր 20-րդ դարի սկզբին Ամերիկայում անվարժ բանվորների մեջ սրվեց հեղափոխական խմորումը :

9. Ի՞նչպէս են ամերիկյան կապիտալիստներն ոգտագործութեան վոր դասակարգի շարքերում յեղած սղզային թշնամանքը նրան թուլացնելու նպաստակով :

10. Ի՞նչ են «Աչխարհի Արդյունարեբական Բանվորները» և ի՞նչպէս են կազմակերպվել նրանք :

11. Ի՞նչպէս են ստեղծվում «Աչ. Արդ. Բանվ.» կազմակերպութեանները և ինչո՞ւ :

12. Ինչո՞ւ «Աչ. Արդ. Բանվ.» չկարողացան Ամերիկայի բանվոր դասակարգի հզոր, մասսայական, հեղափոխական կազմակերպութեանը դառնալ :

13. Ի՞նչ հիմնական պատճառներ նպաստեցին Ռուսաստանի, արհարժման «բալլեիկացմանը» :

14. Ինչո՞վ բացատրել այն բանը, վոր 19-րդ դարի 80-ական թվականներին և 1914 թ. միջև ընկած շրջանում Անգլիան սկսում է հետ մնալ համաշխարհային կապիտալիստական տառջնութեան մրցման մեջ :

15. Ինչո՞ւ այդ շրջանում Անգլիայում հատկապէս ուժեղ անվարժ կամ կիսավարժ բանվորների դերը և նշանակաւթյունը :

16. Վորո՞նք են Անգլիայի դործազուրային շարժման տանձնահատուկութեանները 19-րդ դարի 80-90-ական թվականներին :

17. Ի՞նչ կազմակերպութեաններ ստեղծեց անգլիական բանվոր դասակարգն այդ դործազուրային շարժման շնորհիվ :

18. Ինչո՞ւ այդ ժամանակից անգլիական ցրված արհարժութեանը սկսում է արտադրողական Ֆեդերացիաներ կազմել :

19. Ի՞նչ բան է «Յերբյակ համաձայնութեանը» (վոր յերեւան յեկավ Անգլիայում 1912 թ.) :

20. Ինչո՞ւ այդ շրջանի անդլիական արձմիություններն ինքնուրույն քաղաքական բանվորական կուսակցություն են ստեղծում :

21. Արդյոք անդլիական արձմիությունները 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ազատվում են իրենց սեֆորմիզմից :

22. Արդյոք իմպերիալիզմի շրջանը նպաստեց բանվորների և արհեստակցական միությունների քանակական աճմանը :

23. Արդյոք իմպերիալիզմի շրջանը նպաստե՞լ է (մինչև 1914 թվի պատերազմը) դասակարգային հակասություններին և պրոլետարիատի դասակարգային կռիվի սրվելուն :

24. Ի՞նչպես և իմպերիալիզմը «կաշտում և փչացնում» սոցիալիստական կուսակցություններին և արհեստակցական շարժման «վերին շերտին» :

25. Արդյոք արդարանում են արհեստակցական շարժման դարգացման և հեղափոխական գիլյեկտիկայի որևէ բները, յերբ ուսումնասիրում ենք իմպերիալիզմի շրջանի արհեստակցական շարժումը :

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- А. Чекин. История, теория и практика профдвижения. Вып. I и II. Изд. ВЦСПС.
- Д. Антошкин. Профдвижение в России, стр. 167—244. Изд. 2-е ВЦСПС.
- А. Чекин. Очерки современного тред-юнионизма. Изд. ВЦСПС.
- А. Чекин. Индустриальные рабочие мира. Изд. ВЦСПС.
- З. Нэстрипке—Профдвижение, стр. 166—280 ч. I. Изд. ВЦСПС.
- Н. Ауэрбах. Карл Маркс и профсоюзы. Изд. ВЦСПС.
- У. Врек. Краткая история рабочего движения в Англии. Стр. 46—





20.	Վիշնեվեցկի .—	«Աշխատանքի հաջմանգամների ապահովագրումը» . . . . .	20
21.	«Կանոնադրության գործարկումներին և տեղկումներին կից կուրս-հանձնաժողովներին» . . .	5	
22.	«Որինակելի կանոնադրություն բանակումների, կարմիր անկյան և Ֆիդ-կուլտի խմբակի» . .	25	
23.	Սեմյուշկին .—	«Ակումբային աշխատանքի խնդիրները» . . . . .	30
24.	Լ յ ա շ կ ու .—	«Գողերը» . . . . .	5
25.	»	«Առաջին կարմիր զրոշը» . . . . .	10
26.	Սպիրանսկի .—	«Տուբերկուլյոզը» . . . . .	10
27.	«Յելիբ պալքարի, սարուկ գաղութի», (ինսցենիք.) . .	10	
28.	«Փոխտգուծյան զանձարկղների կազմակերպման կարգը» . . . . .	10	
29.	Յ ա . Ֆ ի ն .—	«Ռուսաստանի արհչարժման 20 տարին» . . . . .	50
30.	«Պրոֆմիությունը և նրա անդամները», (ապագրվում է)		
31.	Ռոզենֆելդ .—	«Ինչ՞ու և ինչպես պետք է ուսումնասիրել արհչարժումը» . . . . .	20
32.	»	«Բանվորական առաջին միավորումները կապիտալիզմի արշալույսին» . . .	20
33.	»	«Ի՞նչպես առաջացան և ինչպես ելին աշխատում առաջին արհմիությունները»	70
34.	»	«Արհատակց. շարժումը մինչև 1914 թ.»	30
35.	»	«Արհատակցական շարժումը համաշխարհային պատերազմից հետո».	30
36.	»	«Արհատակցական շարժումն Ռուսաստանում (1905—25 թ.)».	80
37.	»	«Ի՞նչ է արհատակցական արտագրական միությունը: Արհմիությունը և կուսակցությունը»	
38.	»	«Ամստերդամ և Մոսկվա».	
39.	»	«Ի՞նչ է պրոֆմիության կանոնադրությունը»	
40.	»	«Ի՞նչ է հավաքական պայմանագիրը».	
41.	»	«Ի՞նչ է տալիս բանվ. աշխատանքի օրենսդիրքը»	
42.	»	«Ի՞նչ է սոցիալական ապահովագրությունը».	
43.	»	«Աշխատանքները բանակումում».	
44.	»	Պրոֆաշխատանքը գյուղում:	

ՄԵԾՆԵՔԱՆԱԿ ԳԼՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ ՁԵՂՁ

ՀՀ Ազգային գրադարան



NL0945044

-50-

93

1926p.

ԳԻՆՆ Ե 30 ԿՈՊ.

ԱԳՂ  
-----  
885